

1300

613-88
z-74

Tulu  
1913

2010

2002

3.88

W 2816

Հ ԿՈՒԹԻՒՆ «ՄԱՐՄՆԱՄԱՐՁ» Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՍԵՐՆԴԱԳՈՐԾՈՒՄ

Ե Ւ

## ՄԵՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԳՐԵՑ

ՎԻՆՖԻԼՏ 20L

Թարգմանեց

ԲԻՒԶԱՆԴ ԿԵԶԴԻՒՊԵԶՐԻՔԵԱՆ



613.88

2-74

Ե. ՊՈԼԵՍ

Տպագրութեան Օ. Արջունան

1913

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՎԱՐՄԱԿԱՐՁ ՀԱ

Z-74

188

# ՍԵՐՆԴԱԳՈՐԾՈՒՄ

ԵԿ

## ՄԵՌԱՅԻՆ ԱՐՋԱՎԱՐԱՆՈՒԹԻՒՆ

610  
195-70

1003  
10931

ԳՐԵՑ  
ՎԻՆՖԻԼՏ ZOL

Թարգմանեց

ԲԻՒԶԱՆԴ ԿԵԶԻՒՊԵՏՈՅԻՆԻՔԵԱՆ



Ա. ՊՈԼԻ. Խ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

1913

16262

## Հ Օ Ն

Այն երիտասարդին, որ իր կեանքը կը նուիրէ  
ձեռք բերելու համար մարմնի ու մտքի այն  
բարձրագոյն զարգացումը, որ պիտի ծա-  
ռայէ իրեն կեանքի խնդիրները լուծելու :

ՀԵՂԻՆԱԿԵՆ

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ  
Օ. Ա.ՐՁՈՒՄՐԱՆ  
№ 175



## ՅԱՌԱՋԱԲԱՆ

### ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԹԱՐԳՄԱՆԻՉԵՆ

Աշխարհը որբան աղ փոխուերու վրայ կը տեսնենի՝ զարձեալ մնացուն բաներ կը նշարենի հոն. ումանի՛ մըշ- չեցինապէս օրինարեր, ումանի՛ միշ աղիսարեր: Պատանե- կուրինն ու երիտասարդուրինը դեռ այն է պաօր, ինչ որ էր դարեր առաջ—ընդհանուր զիծերով: Մոդուրինն ու սցիսուրինը անտարեր իրեց դերը կը կատարեն այնին վասահ եւ յարտեր կերպով, որբան մեծցած սերունդը կը մոռնայ անոնց գոյուրինն իսկ:

Այս զիրքը գրուած է Ամերիկացի Աշանաւոր քիչի մը կողմէ, ու տեսած է իր տասնեւելերորդ հրատարակուրինը: Իր- առաւելուրինը ուրիշ այսօրինակ հրատարակուրեանց վրայ, սա է որ չլախցիւր փորձուրեան մեջ ինկած երիտասարդը, սին, եղերական բացազանցուրիններով: Բնախօսապէս կը պարզէ ծննդական գործարաններուն պաշտօններն, զանոնի՛ չարացար գործածելուն նետեամները, պատեր կերպերը: Կ'աւելցնէ նաև կեսնի առողջապահիկ րեժիմի մաս մը :

Թարգմանիչը կը յանձնարարէ ընթերցողին, կարդա- մասնաւոր ուշադրութեամբ ու թերևս երկու անգամ, ծննդական գործարանաց դիրքն ու պաշտօնները, ինչպէս կարդալ եւ ապրիլ գեղեցիորեն գծուած առողջա- պահիկ կեսնի մը:

Ուրիշ թեզարուրին մ'այ սա հ—կարդալ եւ ամեն ինչ մանրանասնօրհն հասկնայք վերջ, աղ Զիետարերուիլ այս հարցերով, միայն ուղղել թերուրինները ու հարկ եղած ասեն, օգնել ուրիշներու:

Սովորութեան մը հետեւած ըլլալու համար, հարկ չենի նկատեր մեր ներկայ հրատարակուրեան գիտական (մանկավարժական, բժշկական եւ լմկերաբանական) արժեքին ու առաւելուրիններուն վրայ խօսիլ. ապահովաբար այս զիրքը ունեցող մը զայն պիտի կարգայ ու ինքնին համօգուի անոր պարունակած մեջերուն ո՛ր աս- տիճան օգտակար եւ մանուանդ բանաւոր ըլլալուն մասին:

Միայն քէ կ'ուզենի խանի մը խօսով հանրութեան պարզել այն պատճառները, որոնի մեզ մղեցին սոյն գրքին հրատարակուրեան, խանի որ մենի մասնաւորապէս նայ ազգին մեջ ըլլալով Ֆիզիկական դաստիարակուրեան շարժումին ստեղծիչները եւ տարածողները, կրնայինք, — ու թերեւս ալ պարտինին — փոխանակ այս օրինակ հրա- տարակուրեան մը ձեռնարկելու, հրատարակել դասա- գիրք մը Ֆիզիկական կրուրեան մասին, ինչ որ անըուշ մեծ պակաս մը լրացնելու պիտի ծառայեր:

Եւ ստկայն նախապատուրինը տալ ուզեցինին սոյն հրատարակուրեան, եւ այս անըուշ առանց բանաւոր պատճառի չեր:

Վայրկեան մը նոյն խոկ ենթադրենի քէ կարողացանի ամբողջ հայ երիտասարդուրինը մարզիկներու վերածել- միքէ ասով կրնայինին իրաւունի ունենալ կարծելու քէ ամեն բան բրած էին Հայ ցեղին բարոյական եւ Ֆիզի- կական բարելամանը համար: Մեզի համար, որ մար- զանները երեք կեսնի նպատակ չեն, այլ միջոցներ միայն ենթական իր բոլոր կարգուրիններուն բարձրա- գոյն վիճակին հասցնելու նպաստով, բնական էր քէ այլ- բանը չպիտի բաւեր. երիտասարդին պայխարող մարզիկի կոչումին եռվ եւ անեկ վեր, կայ օր մը հայր ըլլալու եւ սերունդն ու հայ ազգը զօրաւոր կերպով կարենալ ապ- րեցնելու հրամայական պէտքը:

Մեր վարժարաններուն մեջ կ'աւանդուին այնպիսի գիտելիքներ, որոնց մեծագոյն մասը կամ աշակերը վարժարանին մեջ կը մոռնայ եւ կամ, կեանէի մեջ անոնց գործածութեան պէտք չզգար. հոն զանց առևուած են աւանդուիլ խիկապէս այն բոլոր բաները, որոնց անպայման կերպով օր մը առողջ երիտասարդը պէտք պիտի ու նեայ ենթարկուելու. ան օր մը հայր պիտի ըլլայ, եւ սակայն զանց կ'առնուի անոր խօսիլ Սերենդագործութեան սեռային խնդիրներու մասին, վախճանով — կամ ամեն եիւ ժիշը, վախճան կարծելով — օր աշակերքին աշխեր կը բացուին դեպ ի անթարդասկանութիւն, եւ սակայն առանց այդ դասերուն աւանդման հայ վարժարանները պայօք բարդականութեան կեդրոններ եւ ընդհանրապէս այսօք երիտասարդութիւնն ալ առաքինութեան ու բարդական անբիջ կեանէի մը տիպարներ չեն ապահովարական անդամանին անդիմ կամ անդուի անդամանին:

Այս գրքին նպատակը սակայն երիտասարդներու համար հմայիչ անոն մը շահագործելով իրապէս անթարդասկանութիւններ ընել չե, այլ՝ անոնց պարզել եւ բոլոր պատմութիւններ ընել չե, այլ անոնց պարզել եւ ամենան բաներ, կեանէի սեղծագործութեան գալչեինք եւ ամենան բաներ, միայն որոնց անոն օր մը պէտք պիտի ունենան կեանէի միայն իրենց կատարելի պատօնը եւ պարտականութիւնը մեջ իրենց կատարելի պատօնը եւ պարտականութիւնը մեջ իրենց կատարելի պատօնը եւ մաքուր մնալու, երկար ու լաւ բմբնելու, առաքինի եւ մաքուր մնալու, ի նպաստ բեղմնաւոր կեանք մը պարելու ու այս ամենը, ի նպաստ իրենց անհատական եւ ընտանեկան առողջութեան ու իրենց անհատական եւ ի շահ իրենց ազգին ապագայ կենելունկութեան:

Ահա՛ այս գրքին հրատարակութեան մեջ մեզ առաջ նորդող տեսակեր. ազգը պէտք չունի միայն զօրաւոր միաններով երիտասարդներու, այլ — եւ մասնաւոն — մասնաւորով անհատներու. բարդական շունչը անհատները եւ ազգերը չեն կրնաւ ապրիլ:

ԾՈՒՐԾ ՔՐԻՍՏՈՆ

1913

## ՍԵՐՆԴԱԳՈՐԾՈՒՄ

Ե Ւ

ՍԵՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՍԵՐՆԴԱԳՈՐԾՈՒՄԸ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԸՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՔ ԱՊՐՈՂ

ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՐՈՒԹԵԱՆՑ



Պատահական դիտող մը եթէ նոյն խակ լրջօրէն զննէ բոյսերու և կենդանիներու զանազան գործունէութիւնները, գժուարաւ կրնայ ըմբռնել թէ այս գործունէութիւնները երկու զինաւոր դասակարգերու կրնան բաժնուիլ: Կը դիտէ բոյսի մը սերմնա ծլումը և սկզբնական աճումը, որ քաղ առ քաղ կը դիմէ հասունութեան աստիճանի մը. կը բոլորչի, սերմ կ'արտադրէ, և եթէ միակեաց բոյս մըն է. կը չորնայ, կը մեռնի: Խակ եթէ բազմակեաց բոյս մըն է, ձմբան մօտ, միայն իր տերեւները կը թօշնին ու կը մեռնին. բոյսը կ'անցնի հանգըռափի շրջանէ մը, յաջորդ գարնան արթննալու և վերսկըսկու իր մշտանոյն հոլովոյթը:

Եթէ զննէ կենդանի մը, կը տեսնէ թէ ան ալ հաս-  
նութեան աստիճանի մը կը հանի, կը ծնանի իրեն նը-  
ման մը, կը թօշնի ու կը մեռնի. բայց այս ընդհանուր  
գործունէութիւններուն հետ մէկանդ, կը դիտէ նաև  
բազում ուրիշներ, որոնք ո և է յարաբերութիւն ունե-  
նալ չեն թուիր բոյսին գործունէութեան հետ։ Մարդիկ կը  
տեսնէ, որոնք արտեր կը հերկն, ծառեր կը տապալեն,  
տուներ, գործարաններ ու շոգեկառքեր կը շինեն. կը  
դիտէ թէ անոնք հի անդանոցներ. վարժարաններ և ե-  
կեղեցիներ կը կառուցանեն։ Կարելի՞ է բոյսերու ու կեն-  
դանեաց այս գործունէութիւնները երկու ընդհանուր  
դասակարգերու բաժնեկ։ Աւելի մանրակրկիտ և քննա-  
դատող զննութիւն մը ակներև կ'ընէ թէ այս ամէնքն  
ալ կը ձգտին կամ անհատին և կամ ցեղին պահպանման։  
Անոնք որոնք կը ձգտին անհատին պահպանման, կը  
կոչուին Անձնանուեր Գործունեութիւնի, մինչդեռ անոնք,  
որ կը ձգտին ցեղին պահպանման՝ կը կոչուին Ցեղա-  
պաշտպան Գործունեութիւնի։

### ԱՆՁՆԱՆՈՒԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԻՔ

Անձնանուեր բառը կր նշանակէ թէ «Եա»ն է ձգտու-  
մին կեղծնական նպատակը, և կը բայլանդակէ բոլոր  
այն գործունէութիւնները, որոնք նպատակ ունին ան-  
հատին ապրուսոր, պաշտպանութիւնը և գարգացումը։  
Խնչպէս բուսական գործարանաւորութեան մէջ դիտուե-  
ցաւ, օդէն և հողէն սնունդի իւրացումը, ցողունին,  
ձիւղերուն և արմատներուն աճումը, անձնանուէր գործու-  
նէութիւններ են։ Կենդանիին մէջ — կրնանք առնել իրը  
օրինակ, մարդը, — անձնանուէր գործունէութիւնները  
կ'սկսին մօրը ստինքէն սնունդի իւրացումէն և կը բո-

վանդակեն մանկութեան բոլոր այն գործունէութիւնները,  
որոնք սովորաբար խաղ ու զբոսանք կը կոչուին, և ո-  
րոնց իրական նշանակութիւնն է զարգացնել ջլա-մկա-  
նային գրութիւնը և մասնաւոր զգայարանքները ձկու-  
նութեան ու զօրութեան այն աստիճանին, որ մեծցող  
անհատը անկախ պիտի ընէ։ Անկախ մարդկային էակի  
մը գործունէութեանց մեծագոյն մասը կը ձգտին օրա-  
կան հացի վաստակին, հանգերձանքի և բնակարանի։  
Դարպացական և գոլէճական շրջանի գործունէութիւնն իսկը  
որոնք բացարձակապէս պատանիին իմացական և ֆիզի-  
քական կարողութեանց մշակման կը ձգտին, անձնանուէր  
են։ Եսոյնիսկ զգայուրանական և այլ հաճոյցից հետապըն-  
դումը անհատին կողմէ, կը պատկանին գործունէու-  
թեանց այս դասաւորումին։

### ՑԵՂԱՊԱՇՏՊԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԻՔ

Ինչպէս բառին ստուգաբանութեանէն կ'երևէ, այս  
գործունէութեանց կէտ նպատակն է ցեղին անումը և  
պահպանումը։

Ա. — Սերնդագործում. — Ցեղին պահպանման յա-  
տուկ գործունէութեանց ամենաէականն է սերնդագոր-  
ծումը։ Ամէն ապրող գործարանաւորութիւն, ըլլայ բոյս  
կամ կենդանի, ունի իր տեսակը վերաբռնդերու կա-  
րողութիւն։ Բոյսերէն ոմանք կ'արտադրեն սփոռներ (\*) և  
ումանք սերմեր։ Իիչ մը վերը ակնարկութիւն եղաւ  
ծաղիկներու կազմութեան՝ բոյսերու մէջ։ Ծաղիկը կը  
ներկայացնէ բոյսին սերնդագործող գործարանը, և ծաղ-  
իկին բուն նպատակն է արտադրել հունտը։ Կենդանիները  
կ'արտադրեն հաւկիթներ, որոնց մէջ կը մեծնան ձա-

(\*) Ցրուած հունտ, սերմնիկ։

գուհները, կամ մօր մարմիէն դուրս և զած թխումով մը և կամ մօր մարմնոյն մէջ տեղի ունեցած թխումի նմանօրինակ գործողութեամբ մը։ Վերջին պարագային ձագերը կը ծնին իբր ապրող գործարանաւորութեաներ։

Բ. — Սնունդ եւ պահպանում ձագուկին։ — Մերքնութեան առարկան, ըլլայ բուսական սերմ մը, կենդանւոյ հաւեկիթ մը կամ նորածին մը, — ամէն պարագայի տակ կեանք տուող կամ ծնողական գործարանաւորութիւնը միջոցներ պէտք է ձեռք առնէ փոքրիկին մնունդին ու պաշտպանութեան համար, անոր աճման այն շրջանին մէջ, երբ նորածինը անկարող է դեռ ինքվնքը մնուցանելու և ինամելու։

Բոյսը սերմին մէջ կամ բոլորափքը կը դնէ բաւականաչափ մնունդ, որով ան կարող կ'ըլլայ ասլրիլ բողբոջումի շրջանին, մինչև որ հոգէն և օդէն կարենայ իր ապրուստը հոգալ։ Բաց աստի, բոյսը կը պահպանէ հունտը, զանազան սաղմնային պատեաններով, ձմեռուան ցուրտին ու խոնաւութեան դէմ։

Նմանապէս, նորածին կենդանին կ'ստանայ մնունդ իր ծնողքէն։ Նորածին թռչունը կը թխուի հաւեկիթ մը մէջ ուր բաւականաչափ մնունդ կը հայթայթուի կազմութեանը համար իր ոսկորներուն, մլաններուն, ջղային գրութեան, արեան, գեղձերուն և ծածկութիւն — որոնց ամէնքն ալ կ'աճին աստիճանի մը, որ կարող կ'ընէ թռչունը իր պատեանէն արձակուելէն մինչև քանի մը շաբաթ մնունդ ստանալու իր մօրմէն։ Միւնքոյն ժամանակ պէտք է ինամուի և պահպանուի հօրենական բանին մէջ, մինչև որ կարող ըլլայ իր պաշտպանութիւնը անկախօրէն հոգալ, Նմանապէս գեռատի ստանալորը կ'աճի մօր գործարանաւորութեան մէջ, մինչև այն աստի-

ժանը, որ կարող ըլլայ կեանքի նուիրական պաշտօնները կատարելու։ Շաբաթներով, ամիսներով կամ նոյն իսկ տարիներով, կենդանիին դասակարգին համեմատ, պէտք է ինամուի ու պաշտպանուի ծնողաց կողմէ։ Մարդուն ձագուկը կաթ կ'ընդունի իր մօրը սախներէն և պաշտպանութիւն՝ իր մօր բազուկներուն մէջ իր առաջին տարուոյն ընթացքին, որմէ վերջը կը շարունակէ ստանալ մնունդ, հանդերձանք և պաշտպանութիւն, հայրական երդիքին տակ տասնեւոթէն քան կամ նոյն իսկ աւելի տարիներ տեսող շրջանի մը համար։

Գ. — Ընկերութեան և կարառութեան ապրուսեն ու պաշտպանութիւնը։ — Դեռաստի կենդանիները կը ինամուին ու կը պաշտպանուին, որովհետեւ անկարող են խընամելու ու պաշտպանել ինքզինքնին։ Եթէ այսպէս չինամուէին, ցեղը պիտի ոչնչանար։ Արդ, կան անհամաներ, որքեր օրինակի համար, որոնք, ըսկեան գիտուածով կորսընցուցած են իրենց բնական նեցուկն ու պաշտպանը։ Եթէ ընկերութեան այս անկար անդամները, որոնք դեռ ինքզինքնին հոգալ չեն դիտեր, չինամուէին, պիտի փառանային և ցեղին համար կորսուած պիտի ըլլային։ Նախնական մարդուն ժամանակէն մինչև այսօր, ընկերութեան այս տկար անդամները որոնք գրկուած են իրենց բնական պաշտպաններէն, ինամուած են ընկերութեան զօրաւորագոյն անդամներէն, և ստացած այն հոգածութիւնը, որ անհարժեշտ է զիրենք անկախ ընկու համար։ Նմանապէս, ընկերութեան հիւանդ ու հաշմեալ անդամները ինամուած են զօրաւորագոյններէն։ Այսպէս կը տեսնենք թէ հիւանդանոցներու, որբանոցներու, դարմանատուններու, պատսպարաններու կառուցումը, ամէնքն ալ կը պատկանին գործունէութեանց Ցեղապաշտական կամ Քնկերսիրական դասակարգին։

2. ՄԵԿ ՔԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ  
ՍԿՂԲՈՒՆ ՔՆԵՐ

ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ ՈՒ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆ ԱՆՁՆԱՆՈՒՅՆ  
ԳՈՐԾՈՒՆ ԵՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

Խորհող ընթերցողը շատ հաւանաբար կը հարցնէ —  
ինչո՞ւ մարդ արտերը կը հերկէ . ինչո՞ւ մարդ անտառ-  
ները , ծառերը կը ասպարէ . ինչո՞ւ ընտանի կենդանի-  
ները կը խնտմէ . ինչո՞ւ հողը կը փորէ ի խնդիր հան-  
քային նիւթերու : Ասոնց ամէնքն ալ յոդնատանջ գոր-  
ծունէութիւններ են , որոնք ժամանակի , հանճարեղու-  
թեան ու զօրութեան ապառում կը պահանջնեն : Կրնանք  
ըսել թէ ասոնք զոհողութիւններ են զորս ինք կ'ընէ և  
թէ ըստ երեւոյթին , յօժարութեամբ կ'ընէ : Եթէ քիչ մը  
աւելի մօսէն քննենք խնդիրը , պիտի տեսնենք թէ ան  
կը հերկէ արտերը և կը խնամէ ընտանի կենդանիները  
իր մուռնդին համար , թէ հակայ ծառեր կ'զգեանէ իրեն  
բնակարան շինելու համար , թէ զանազան բոյսեր կը  
մշակէ ինչպէս նուե կենդանիներ կը խնամէ . իր հան-  
գերձանքին համար , թէ կը սկեզէ երկիրը ձեռք ձգելու  
համար զանազան հանքայիններ , ի պէտս իր զանազան  
ճարտարաբուեստական գործունէութեանց : Ուրեմն յայտնի  
կ'երեւի թէ գործարանաւորութեան մը անձնանուէր գոր-  
ծունէութիւնները կը ներկայացնեն զոհողութիւն մը ,  
որուն կը հետեւի վարձատրութիւն մը : Անհատը կը զոհէ  
որպէս զի յետոյ ընդունի իր վարձատրութիւնը : Կրնայ  
յայտարարուիլ իրը ընդհանուր կենսաբանական ձշմար-

մարտութիւն մը թէ . բնութիւնը կը պահանջէ զոհողու-  
թիւն՝ բողոք ապրոյ զործարակաւորութիւններէն , եւ իրեւու  
բնական պայմաններու տակ , եղած զոհողութեան հա-  
մապատասխան վարձ մը կ'ընծայէ :

ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆ ՅԵՂԱՊԱՇՏՊԱՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆՑ ՄԷՋ

Ա. — Սուրին զործարակաւորութիւնն . — Կրնանք  
երր նմոյշ ստորին գործարանաւորութեանց , առնել մանա-  
րածքն (առօeba) . Եթէ մանրադէտին միջոցաւ ման-  
րածքն քննենք , պիտի տեսնենք թէ ան կը շարժի , կը  
սողուկի ապակիին մակերեւոյթին վրայ , հոս տեսակ մը  
ոտք , հոն բերան մը կամ ստամոքս մը ձեւացնեղով .  
Ինքինքը , մանրադէտին ապակիին վրայ կը տեղափոխէ  
յանկարծ երեւոցող շարժիչ գործարաններու օգնութեան  
չորսիւ : Բոլոր այս գործունէութիւնները անձնանուէր  
գործունէութիւններ են : Մանրածքն չանքեր ի գործ կը  
դնէ , իր ապրուստին համար . ուժ կը վատնէ ստանալու  
համար իր պահպանումը եղող վարձատրութիւնը : Եթէ  
շարունակենք զննել այս փոքրիկ գործարանաւորու-  
թիւնը , պիտի տեսնենք թէ ուշ կամ կանուխ ան կը  
մանէ հանգատի շրջանի մը մէջ , որմէ վերջ շատ չի  
տեսեր երր կ'սկսինք դիտել կարեւոր ներքին փոփոխու-  
թիւններ , որոնք ի յայտ կուգան կորիզին շուրջ , և այս  
վերջինը հետզհետէ կը բաժնուի երկու հաւասար մասե-  
րու , որոնցմէ իւրաքանչիւրը իր հետ կը տանի ծնող  
գործարանաւորութեան նախահիւթին կէսը : Երբ այս  
երկու ձագուկ մանրածքները քովէ քով կը կենան ման-  
րադէտին ներքեւ , խոնուն ընթերցողը կը հարցնէ — ի՞նչ

եղաւ ծնող գործարանաւորութիւնը :Մինչ առաջ մեր առաջեւ ունեինք մէկ հասուկ մանրաձձի մը , հիմա ունինք երկու դեռատի մանրաձձիներ , որք կը պատկանին յաջորդող սերնդեան : Հօր գործարանաւորութիւնը իր գոյացութիւնը և իր անհատականութիւնը զոհներ է բացարձակապէս ու կատարելապէս , յաջորդ սերնդեան համար :

Կրնայ ըսուիլ թէ առ հասարակ ու եւ և սերնդագործում կը նշանակէ հայր գործարանաւորութեան զոնէ մասնակի բաժանումը : Մանրաձձին այս բաժանումը կ'ըլլայ երկու հաւասար մասերու մէջ : Ստորին բոյսերու և կինդանեաց ոմանց մէջ հայր գործարանաւորութեան գոյացութիւնը կը բաժնուի հաւասար մանրիկ հունաերու կամ հաւկիթներու , որոնցմէ իւրաքանչիւրը կ'աճի , կ'ըլլայ բոլորովին նոր գործարանաւորութիւն մը :

Բ. Աւելի բարձր գործարանաւորութիւններ . — Ասոնց մէջ ալ իրենց մարմնոյն նախահիւթին մասնակի մէկ բաժանումը տեղի կ'ունենայ : Սակայն և այնպէս , փոխանակ երկու կամ աւելի մասերու բաժնուերու և յաջորդ սերնդեան մէջ կորսնցներու իրենց անհատականութիւնը , բարձրագոյն գործարանաւորութիւնները իրենց նախահիւթին իրաս փոքր մէկ մասը միայն կը զատեն հաւկիթ մը կամ սերմի մը մէջ , մինչ հայր գործարանաւորութիւնը կը շարունակէ ապրիլ , արտադրելու համար հաւկիթներ կամ հունաեր ուրիշ առիմներով :

Մինչ բարձրագոյն գործարանաւորութեանց մէջ ծնողական զոհողութիւնը , հաւկիթ կամ սերմնահիւթարտադրերու մէջ խիստ չնշին է ու աննշան , և սակայն այս սկզբնական բաժաննեան յաջորդող զոհողութիւնները անհունօրէն աւելի են բարձր դասու գործարանաւորութեանց քան թէ ստորին , գասակարպի գործարա-

նաւորութեանց մէջ : Մարդկալին էակէն աւելի յարմար օրինակ չկրնար ըլլալ : Մարդկային ձուփկը , որ մայրաւկան գործարանաւորութենէն կը զատուի , նախահիւթի փոքրիկ դնդիկ մըն է , զրեթէ մանրադէտովլ տեսաների : Մօրը զոհողութիւնը այս ձուփկը արտադրելու մէջ աննշան է , բայց այս ձուփկին արտադրումը նախաքային է մօրը յանձն առնելիք ապագայ զոհողութիւններուն :

Արգասաւորուած ձուփկը որովայնին ներքին մակերեսին փրայ կը հասաւատուի և կ'սկսի անմիջապէս մնունդ ծծել մօր գործարանաւորութենէն : Քիչ ժամանակէն կը կազմուի սիրտ մը և արեան խողովակներ , այնպէս մը յարմարցուած մօրը արեան խողովակներուն , որ ներորովայնային գոյութեան մէջ , մօրը արիւնը կը հայթայթէ աճող , մեծցող մանկան բոլոր այն մնունդը , որով պիտի կազմուին սուլորները , մկանները , ուղեղը և գեղձերը , և որոնք պիտի պատրաստեն փոքրիկ մասնուկը աշխարհ գալու , իրը ապլուլ , չնչող ու զգացող գործարանաւորութիւնը մը : Մօր գործարանաւորութեան կենսունակութեան սոյն կորուսով այնքան մնէ է որ յաճախ մօրը փիզիքական զօրութեան մէջ յայտնի նուազում յառաջ կուգայ , մասնաւորապէս արեան քանակին մէջ :

Այն ժամանակամիջոցին մէջ , երբ մանկիկը աճելու վրայ է մօր մարմնոյն մէջ , մայրը պէտք է ուրիշ զոհողութիւններ ևս ընէ , օրինակի համար պէտք է քաշուի ընկերութենէն , առանձնանայ իր տան չորս պատերուն մէջ և պատրաստութիւն տեսնէ ակնկալուած մանկան հանդերձանքին համար : Բաց աստի , կան նաև ծննդարերութեան ժամանակ իր քաշելիք ցաւերն ու նեղութիւնները : Բնականոն պայմաններու ներքեւ , մասնուկը իր կեանքին առաջին տարւոյն մէջ իր մնունդը

մօրը ստինքէն կ'ստանայ։ Այս մնունդն ալ իր կտրգին կը պատրաստուի կաթնահոս գեղձերէն, զորս այս վերջինները կը պատրաստեն արփնէն ծծելով — ահա ուրիշ կորուսա մը իր կազմին։ Մանկութեան ու պատանեկութեան շրջաններուն, մայրն է որ իր զաւկին կերակուրը կը պատրաստէ, զգեստները կը հոգայ, — բաներ՝ որոնք քիչ ոյժ և ժամանակ չեն պահանջեր։ Տարիներով մայրը պատրաստ է իր զաւկին ծառայելու նթէ ան հիւանդանալ, և թերեւ չկայ մայր մը, որ իր հիւանդզաւկին սնարին քով բաղում գիշերներ հակմամբ սնուցած չըլլայ։

Կրնանք հիմա ինկատ առնել հօրը ևնթարկուած զոհողութիւնները։

Ինչպէս մօրը, նոյնպէս ալ հօրը պարագային, իր մարմինէն ելած սկզբնական բաժանումը խիստ չնշին բան մըն է, բայց իր պարագային ալ յաջորդ սերնդեան համար իր ենթարկուելիք զոհողութիւնները միայն կ'ըսկամին այս առաջին բաժանմամբ, և կը շարունակեն մինչեւ տասնեւհինգ, քսան, երեսուն տարիներ — երբեմն յարածուն համեմատութեամբ։ Այս զոհողութիւնները մեծ մասամբ ապրուստի և պաշտպանութեան միջոցով տեղի կ'ունենան, և կ'սկսին յղութեան առաջին վայրեանէն, — քանի որ յղի կինը իր ամուսինէն շատ տեղի խնամքի ու հոգածութեան պէտք ունի իր այդ վիճակին քան ուրիշ ու է վիճակի մը մէջ։

Սովորական հայր մը, սովորական մօր մը պէս, պատրաստակամութիւնը կ'ունենայ իր հիւանդ զաւկին քով հակելու, եթէ առիթը ներկայանայ, և ընկու ու քով զոհողութիւններ զաւկին՝ ապրուստին ու պահպանումին համար։

Վերը ցուցուած է թէ անձնանուէր գործունէու

պան գործունէութիւններն ալ վարձատրութիւն կ'ընդունի՞ն։ Այս հարցման էն համոզիչ լուծումը, պիտի ըլլուստ աձնական օրինակը։ Թող ամէն երիտասարդ հարցնէ իր ծնողաց թէ վարձատրուած են, այն բոլոր զոհողութիւններուն համար, զորս յանձն առած են իրեն հանդէպ։ Եթէ զաւակը եղած է մէկը, որ փառք ու գոհունակութիւնը բերած է իր ծնողացը, յայանի է աներկրայ թէ իրենց պատասխանը ի՞նչ պիտի ըլլայ, այսինքն թէ — բիւրապատիկ աւելի ստացած են իրենց զոհողութիւններուն համար։ Ի՞նչ բանի մէջ կը կայանայ այդ վարձատրութիւնը, կրնայ համառօտակի ըսուիլ Զաւկի Սկր։ Զաւկի սիրոյ սոյն սկզբունքը կը թուի ընդհանուր սկզբունք մը ըլլալ գիտակից, ապրուղ դասաւորութեան մէջ։

Չնչ ոք պիտի ըսէր թէ ծառն ալ ունի այս զգացումը. և սական հաւանարար ոչ ոք պիտի հակառակէր թէ Երինոս միակ կրնայ ունենալ զայն։ Հաւանարար ամէն կինդանի որ իր զոհողութեան գիտակցութիւնը ունի, ունի նաև այս զգացումը. այսինքն, եթէ կենդանի մը զիտակից է իր զոհողութեան, կարող է նաև գիտակից րլաւ իր վարձատրութեան, զոր կը կոչենք Զաւկի Սկր։ Իսկ այս գործարանաւորութեանց մէջ, որոնք կեանքի ամենաստորին աստիճաններուն վրայ գանուեկով ոչ սիրոյ և ոչ ալ զոհողութեան գիտակցութիւնը ունին, բնութիւնը տարբեկ կարգադրութիւն մը կը թուի ըլլած ըլլալու. — հոն զոհողութեան տեղ կը բռնէ, մարտնչումը և տիրացումը էզի մը և անոր պահպանումը, մինչ վարձքի տեղ կը բռնէ սեռախին զուգաւորումին հանոյքը։

Զի կրնար տարակուակի մը կ'ըսէր կ'երջին աղողակը, բարձր դասաւորակնենուն մէջ պէտք մը, կը ունի։ Եւ սպական քանի բարձրանակ մը, մասնաւոր կ'ըսէր։

աստիճանաւորումին մէջ, աւելի կը նուազի սեռային հաճոյքի ազգակը և կը զօրանայ Զաւկի Սիրոյ ազգակը: Բարձրագոյն աստիճանի կենդանիներէ ուժանց մէջ—մասնաւորապէս անսնց, որոնց մէջ ընտանեկան ու հասարական կեանքը մնծապէս զարգացած է—յաճախ կը գործէ ուրիշ պարագայ մ'ալ, որ կարեւոր է սերնդագործման յարակեց զոհողութիւնները մնդելու և վարձատրելու մէջ: Կ'ակնարկենք ծնողքներուն այն ակնկալութեան թէ՛ իրենց ծեր տարիքին մէջ, իրենց զաւակները թեան թէ՛ իրենց ծեր տարիքին պարագայ մէջ, հաւամին զիրենք: թէ պիտի հոգան իրենց ապրուսաը ու խնամին զիրենք: թէ պաղափարը մնծ դեր մը կը կասարէ սերնդագործման մէջ, հաւանական չէ: բայց թէ վերջերը նկատառման կէտ մը կը գառնայ, տարակուսելի չէ: Սակայն, մաս ցորչափ այս անձնական բարեկաւման նկատումները մաս ցորչափ այս անձնական բարեկաւման նկատումները մաս ցորչափ զոհողութիւններուն, մնք կը անդափոխմնք այս կրած զոհողութիւններուն, մնք կը անդափոխմնք այս նկատումները ցեղապաշտպան դասակարգէն՝ աճնանուէր դասին մէջ:

Վերադառնալով կրկին ստորին գործարանաւորութեանց մասին խնդրոյ մը, նկատի առնելու ենք թէ այն գործարանաւորութիւնները որոնք անդիտակինց են իրենց զոհողութեան, ինչ տեսակ ու տարիճան փոխարինութիւն կ'ստանան: Բարձրագոյն կենդանինց գիտակից զոհողութիւնը կ'ընդունի գիտակից փոխարինութիւն մը: նըմանապէս, ստորին գասաւ գործարանաւորութիւններու անդիտակից զոհողութիւնները կ'ընդունին անդիտակից փոխարինութիւններ:

Պէտք է միշել թէ մանրաճճին չմեռաւ, այլ վերակենդանացաւ իր ձագերուն մէջ: Յաջորդ և իւրաքանչիւր յետագայ սերնդեան մէջ, մահ չկայ, այլ վերածնութիւն: Անա այսպէս կ'երեւի թէ այս ստորին գոր-

ժարանաւորութիւնները կը վայելեն անմահութիւն: եկամ, յաւես է ըսեկ, թէ այս գործարանաւորութեանց նախահիւթը կը վայելէ անմահութիւն, և թէ ոյս անմահութիւնն է փոխարինութիւնը այն զոհողութեան, զոր իւրաքանչիւր անհատ կ'ընէ անդիտակիցօրէն բաժնելով իր նախահիւթը: Կենսաբանութեան սոյն սկզբունքը առաջին անգամ գտնուեցաւ ու պարզագրուեցաւ աշխարհանոչակ գերման կենսաբանին, Վայսմանի կողմէ:

### ԱԿԶԲՈՒԲՆԵՐՈՒԻ ԱՄՓՈՓՈՒՄ

**Ա.**—Սերունդի բազմացումը ու պաշիկներու և անպաշպաններու ապրուսը ու պահպանութիւնը կը պահածեն զոհողութիւն՝ ծնողած և ցեղին զօրաւոր անդաններուն կողմէ:

**Բ.**—Ցեղին համար եղած գիտակից զոհողութիւնը, իրեւու բնական բերումով կ'ստանայ իր փոխարինութիւնը:




## ԳԼՈՒԽԻ Բ.

### ԱՐԲՈՒՆՔԸ ԱՐՈՒՆԵՐՈՒՄ ՄԷջ

Տասնեհինգէն-քսանեհինգ տարեկանի շրջանը, երբ  
մարդ տղայութնեւ կ'ելլէ և կը մանէ հասուն, չափա-  
հաս տարիքի մէջ, կը կոչուի Պատանելութիւնն և Ար-  
դունն: Արբունքի շրջանին որոշ յատկանիւերն են Գի-  
զիքական և հոգեկան մամաւոր փոփոխութիւններ:  
Արբունքի շրջանը կը տեւէ երկու տարի, և Ամերիկա-  
ցի տղոց մէջ, միջին հաշուով, տասնեհինգէն - տասնե-  
եօթը տարեկանին կ'ըլլայ ու կը լրանայ, երբ պատու-  
նին կարող կ'ըլլայ արտադրել սերմը, որ կարողանաց  
արգասաւորել մարդկային ձուիկը: Եւ սակայն բացար-  
ձակապէս ընդունուած իրողութիւն մ'է, . հիմա, թէ  
պատանին երբ աճման այս տատիճանը կը համար, թէն  
կրնայ կոչուիլ մարդ, սակայն առնականութեան ստոր-  
նագոյն աստիճաններուն վրայ կը գտնուի. չէ հասուծ  
գեռ Փիզիքական ու մտային զարգացման այն հասու-  
նութեան, որով կարող ըլլայ սերնդագործման յարակից  
պատասխանատուութիւնները ստանձնելու: Սովորական  
պայմաններու մէջ, գեռ ութը ասրուան զարգացման  
պէտք ունի, համանելու համար չափահաս առնակու-  
թեան հասուն վիճակին, որ ատեն պիտի տիրանայ Փի-  
զիքական ու մտաւորական այն կարողութիւններուն,  
որոնք կը պահանջուին մէկէ մը՝ որ պիտի ստանձնէ  
ծնողական պատասխանատուութիւններ. այնպէս որ մի-  
ջն հաշուով քսանեհինգն է, կրնայ ըսուիլ, այն տա-

քիքը երբ անհատ մը հասած կ'ըլլայ կատարեալ զար-  
գացման և լրացուցած կ'ըլլայ արբունքի շրջանը: Հիմա  
կընանք օգտակարապէս նկատի առնել այս կարեւոր  
շրջանին յարակից փոփոխութիւնները մանրամասնօրէն:

### 1. Ֆիջիբլկան ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ



### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԱՐՆՈՅՆ ՄԷՋ

Ա. - Մազուրութիւն. - Մարդկային էակը կը պատկա-  
նի ողնայարաց սամաւոր գասակարգին, և իրը անդամ  
այդ գասակարգին՝ ունի իր մարմնոյն մորթային մակե-  
րեսին տակ, բացի ձեռաց ափերէն ու ոտից ներբան-  
ներէն, մազի պարուտակներ որոնք կ'արտադրեն հերոս  
ծածկոյթը որ յատկանշական է ստանաւորներուն մօտ:  
Եթէ մարդկային մարմնոյն վրայ մազերու ցրւումը լաւ  
մը զննենք, զայն բազդատելով մարդակերպ կապիկ-  
ներուն հետ, պիտի տեսնենք թէ բաշխումը միենոյնն  
է. և թէ մազի «փառ»ը մարդուն մարմնոյն ուեէ մէկ  
մասին վրայ կատարելապէս կը համապատասխանէ կա-  
պիկն միենոյն մասին: Օրինակի համար - նախաբա-  
զուկին վրայ, մազերը գէպի դուրս և գէպի վեր կը  
ցցուին. բազուկին վրայ՝ գէպի վար, ու գէպի դուրս, և  
այսպէս շարունակաբար, մարդկային ու կապիային սե-  
մերուն մէջ: Ամէն մանուկ աշխարհ կուգայ մազի նախ-  
նական խաւով մը, որ անմիջապէս կարձակուի: Գրլ-  
խուն, յօնքերուն և թարթիչներուն մազերէն զատ,  
մորթը ամիսներով, ու նոյն իսկ տարիներով զերծ է

մազի ուեէ նշմարելի աճու մէ : Արբունքի շրջանին սկիզբը սակայն, մազի աճումը չափազանց կը փութացուի մարմնոյն ամբողջ հերուտ մակերեսին վրայ, մասնաւորապէս դէմքին վրայ, անութին տակը ու ծննդական գործարանաց շուրջը : Ընդհանրապէս ընդունուած կենսաբանական օրէնք մ'է թէ, սեռային աճումի շրջանին, մազոտ առնաւորի հանգամանքը կը շեշտուի : Մազի սոյն աճումը, այս ժամանակին, կրնաց միայն մէկ կերպով մեկնուիլ, այսինքն թէ, մարդուն նախանայրերը մազոտութեան խիստ յառաջացեալ վիճակի մը մէջ կը գանուէին, քան արդի մարդը : Այս ասթիւ հետաքրքրական է դիտել մարդոց գրեթէ տիեզերական կեանքը, դէմքը աղատելու այս հերային աճումէն, զանազան կերպերով, կամ փետելով և կամ ածիկելով մօրուքը : Հերազերծութեան սոյն սովորութիւնը հառանաբար խիստ հին ծագում ունի, և թէ վայրենի, թէ քաղաքակիրթ ժողովուրդներու մէջ դիտուած է :

Բ.—Զայնը.—Բոլոր կենդանիներուն մօտ ձայնը կուրեսոր գեր կը խաղաց սեռային ու ընկերական յարաբերութեանց մէջ : Բազում կենդաննեաց մէջ, ձայնը կործես ուրիշ պաշտօն չունի այլ սեռային կոչ մը, կամ զոյգերու և ծնողաց ու ձագուեկներու միջև հալորդակցութեան միջոց մը ըլլու : Մարդ էտէրը, կը լուսաբանէ այս ընդհանուր կենսաբանական սկզբունքը, այն խոր փոփոխութիւններով որոնց կ'ենթարկուի իր ձայնը արբունքի շրջանին : Այս փոփոխութիւններն են, արուին մէջ, հագագին խորութեան աւելնալը, և այսպէսով ձայնական թեկերուն երկարացումը, որոնք իրենց կարգին կը սահմանաւորեն ձայնին բարձրութիւնը, սովորաբար մէկ ութեակ (օշուու) մը, ոչ միայն ցածցներվ զայն, այլ խիստ հաճելի գործելով զայն որակով ու ուռացացնելով զանգուածը :

Գ. — Ուկոր, Մկանունի ու Գեղձեր . — Վերսիշեալ փոփոխութիւններէն անհունօրէն աւելի կարեոր են, — որոնք սակայն անհշմար կը մնան պատահական դիտուին, — այն ֆիզիքական փոփոխութիւնները, որոնց կ'ենթարկուի մարմինը արբունքի շրջանին առաջին կիսուն . կ'ակնարկեմ սոկորներու, մկաններու և բոլոր մառցման հետ յարնչական գործարանաց աճումին :

Այս խորունկ ֆիզիքական փոփոխութիւններուն առաջին քայլն է, հասակի յանկարծական աճումը, որ կ'երեւի տասնեհինգ տարեկանին : Բնաւ տրասկարգ չէ որ տղայ մը չորսէն մինչև վեց մասնաչափ (10—15 սանթ.) աճի մէկ տարուան մէջ : Հասակի սոյն աճումը մեծ չափով առաջ կուգայ աղդրի ու սրունքի սոկորներուն երկայնացումէն . Աղդրին ու սրունքին հետ համեմատական չափով կ'աճին նաև բազուկի սոկորները . աղուն վերարկուին թեզանիքը արմուկին կէսը կը հասնի, ու տափատին ծայրերը իր ծունդերուն կէսը : Մը կանները չեն կրնար սոկորներուն չափով աճիլ և թոյլ ու անզօր կ'ըլլան : Գժուար է պատանիին համար իր ուսերը ետ ու կուրծքը դուրս բանել . իր շարժումներուն մէջ ցախաւեր է ու անձան և մկաններուն դիրքին պատճառաւ չուտով կը յոգնի : Բայց երկար չտեւեր, երբ մասնները կ'սկսին զարգանալ և արագօրէն կ'աճին ծաւալով ու զօրութեամբ, լեցնելով բազուկները, սըրունքները, կմանակն ու ուսերը մկանային հիւսուածքի խոշոր զանգուածներով : Մկանային սոյն զանգուածները պատանիին մարմնոյն ձեւը կը փոխեն, ու ինչպէս առաջ հասակով, հիմայ ալ լայնքով կ'սկսի աճիլ :

Զանգուածային սոյն աճումները կրնան կատարուիլ միայն սննդառման գործողութեանց կրկնապատկուած գործունէութեամբը : Սխորժակը պարզապէս անյագ կ'ըլ-

լայ. տղան կրնայ օրական երեք կամոնաւոր ճաշեր ուտել, բացի նախընթրիկներէն. գիշերն իսկ եթէ արթըննայ, անօթի է: Այս մնունդը ծծելու և մարսելու համար, մարսողական խողովակը ամբողջովին և ի մասնաւորի սասամոքաւ, կ'ընդլայնի ծաւալով: Այս սընունդին (արիւն) բաշխումը ի գլուխ հանելու համար, սիրտն ալ մեծապէս կ'աճի ծաւալով ու զօրութեամբ: Մկանի այս աճումին ու մնունդի քանակին աւելնալուն հետ, հիւսուածքներուն մէջ մեծ օքսիտացում կը կատարուի: Եւ այս կը պահանջէ չնչողութիւն, որ իր կարգին կը զարգացնէ չնչողական զրութիւնը: Վանդակը կ'աճի ամէն համեմատութեամբ, կը խորունկնայ, կը լոյնայ ու կ'երկարի: Ոչ միայն վանդակին տարողութիւնը կը շատնայ, այլ նաև աւելի ճկուն կ'ըլլայ ու համապատասխան կազմին պահանջներուն:

Եթէ հետաքրքրուինք այս փոփոխութիւններուն կենսաբանութեամբը, դժուար չպիտի ըլլայ գանել բնական պատճառները որք կը ծնին զանոնք: Բնութիւնը ընտանիքի հիմնադիր մը պատրաստելու վրայ է, ոնհատ մը, որ կարող պիտի ըլլայ մնուցանելու ու պահելու ոչ միայն ինքզինքը, այլ նաև բնաւանիք մը: Նոխամորդուն մէջ, առ այս անհրաժեշտ բաներն էին, ոսկորի ու մկանունքի աճում: Մինչդեռ արդի ընկերական պայմաններուն մէջ, ոսկորի ու մկանի այնքան պէտք չկայ, ասկայն բնութեան յատակագիծը նուազ ակրնյանի ու հետաքրքրական չէ:

### Ծ Ն Ն Գ Ա Կ Ա Ն Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

Ա. — Կազմական փոփոխութիւններ. — Ծննդական արտաքին գործարանները, վերոցիշեալ արբային հերոտութիւնը ցուցնելէ զատ, մեծապէս կ'աճին ծաւալով:

Առնանդամը կ'աճի բոլոր համեմատութիւններով, նմանապէս ամորձիքն ու աղափը (ամորձիքին պարկը):

Բ. — Գործարանական փոփոխութիւններ. — Ամորձիքը և յարակից գեղձային մարմինները, հետզհետէ կատարեալ սերմ պատրաստելու կարողութիւնը կը զարգացնեն, որ կրնայ արգանաւորել մարդկային ու ձիկը: Երբ այս գործարանները կարող ըլլան կատարեալ սերընդագործման, արբունքի շրջանը. լրացած է:

Այս առթիւ, կարեւոր է դիտել թէ ամորձիքին աճումը խորունկ ներգործութիւն մը կ'ընէ պատանիին փիզիքական ու մասմին յատկութեանց վրայ: Այս ներգործումը կը կատարուի այն հեղուկ մարմինն միջոցաւ, որ ամորձիքին մէջ կը պատրաստուի և գարձեալ կը ծծուի մարմնէն, այսպէս հասնելով արեան, ուր իր խորհրդաւոր՝ այլ խորունկ աղղեցաւթիւնը կը թողու և տափկա մոքին ու մարմինն վրայ կ'ազգէ: յետագայ դլուիի մը մէջ պիտի խօսինք այս մասին:

### ՀԱԳԵԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

#### Խ Ա Դ Ա Ա Շ Խ Ա Ն Ք

Ա. — Արօներ. — Բարձրագոյն կենդանիներէն շատերը, ի մասնաւորի մարդը, և մարդոց բոլոր ցեղերը, իրենց արբունքի շրջանի ուժերուն մեծագոյն մասը կը նուիրեն խաղերու և զրուանքներու, որոնց մէջ անհաներ կամ անհաներու խումբեր մրցակից խումբե-

րու հետ կը պայքարին, և որոնց մէջ ի յայտ կուգան ջա-մկանային դրութեան զանազան կարողութիւնները, ինչպէս են ճարպիկութիւնը բոլոր զգայարանաց, արագութիւն ու ուղղութիւն դատողութեան, ճկունութիւն, արագաշարժութիւն և ոյժ։ Որոնք կը քննադատեն խաղերը, իբր ուժի ապարդիւն վատնում։ Բնդհակուակը, մարդուն կողմէ վատնուած ոյժը ոչ մէկ կերպով կրնայ արտադրել այնքան թանկարժէք նիւթ մը, որքան այն՝ որ ձեռք կը բերուի առնական, խաղամարացին և փիզիքական մարզանքներու միջոցով։ Այս խաղերուն պտուղներն են այն նիւթերը որոնք կը վատնուին իրմէ, և այս բանը առեղծուածային կրնայ թուիլ։ Աւղեղին, մասններուն և գեղձերուն գործածութիւնը, և այս հիւսուածքներուն բջջանիւթին սպասումը, յառաջ կը բերէ ջիղերու, մկաններու և գեղձերու զարգացում և զանոնք աւելի ևս մարդուած, ճկուն ու աշխոյժ կը դարձնէ քան առաջ։

Այսպէս, դաշտային խաղերը, թէև ջիղ, մկան ու գեղձ կ'սպասեն, սակայն և այնպէս կը զարգացնեն այս հիւսուածքները աւելի բարձր արդիւնաւ որութեան մը։ Բնութեան նպաստակը խաղերու այս բնագդական ընդգրկումին մէջ, պէտք է յայտնի ըլլայ։ Բնութիւնը կը կրթէ ու կը զարգացնէ արու կենդանին (մարդը) արդիւնաւորութեան գերազոյն աստիճանին, այնպէս որ խաղերը, փոխանակ ոչ-արդիւնաւոր ըլլալու, պատճառ կ'ըլլան զարգացներու հիւսուածքներ, աւելի արժէքաւոր աստիճանի մը ոչ միայն անհատին մէջ, այլև ընկերութեան համար։

Բայց ասաի, այն մտային յատկութիւնները որոնք մրցակիցներու միջև կը մշակուին խաղավայրին մէջ, ճիշտ ու ճիշտ այն յատկութիւններն են, որոնք յետոյ

կեանքի ապագայ լուրջ պայքարներուն մէջ մարդը ամենէն աւելի կը մօտեցնեն յաջողութեան։

Բ. — Արդիւնակը Զբարյումներ. — Պատանիին համար կարեւոր է նաև արդիւնարեր զբաղում մը ունենալ։ Այն պարագան թէ պատանիին պէտք չէ տրուի իր կարողութենէն վեր գործեր, հարկ չկայ չեշաելու, ոչ ալ պէտք է իրեն արուին այնպիսի պարտականութիւններ՝ որոնք ժամանակ չթողուն մասնակցելու դաշտային խաղերու։ Սակայն, փորձառութիւնը կը ցուցնէ թէ պատանին աւելի բազմակողմանի զարգացում մը կ'ըստանայ, եթէ գործն մաս առնէ ո և է արդիւնարեր գործի մը մէջ, քան՝ եթէ ձգուի որ իր բոլոր կարողութիւնները նույիրէ խաղերու։ Եթէ միայն պատասխանատու բռնուի տնտկան կամ չուկայի փոքրիկ պարտականութեան մը համար, ասիկա ոչ միայն կը զարգացնէ իր մէջը ձեռներէցութեան ողին և համակրութիւն մը կ'ստեղծէ իրմէտ սարեցներուն հանդէպ, որոնք իրենց ամբողջ ժամանակը նման գործերու կը նույիրէն, այլ, —ինչ որ աւելի կարեւոր է քան այս երկու նկատումները — այս պարտականութիւնները իր մէջը կը զարգացնեն գործ մը փութով ու արդիւնաւոր կերպով մը կատարելու կարողութիւնը և կը վարժուի զանոնք փութով ու կանոնաւորապէս ի գլուխ հանել, որովհետեւ պարտականութիւն մընէ, առանց գործին մէջ ո և է անձնական համոյք վայելելու գաղափարը ունենալու, աշխատիլը։ Եթէ կեանքի այս կարեւոր դասը արբունքի կանխագոյն շրջանին սորվուի, կեանքի ուղին ումանց կարծածէն շատ աւելի հեշտին կը դառնայ։

Ը Ն Կ Ե Բ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը

Յարակցաբար դաշտային խաղերուն, պատամին աւելի կամ նուազ սերտ յարաբերութեան մէջ կը մոնէ իր և հակառակ սեռին պատկանող ընկերներու հետ։ Մինչ տասնէն տասնենինդ տարեկան տղեկը կը հրձուի «Այսումքեր ու խմբակներ» կազմելով, տասնեւեօթը ասարեկանը հաւասարապէս կը հրձուի իր ծանօթներու շրջանակը լայնցնելով։ Դաշտային մրցումները ոչ միայն առիթը կ'ընծայեն իրեն իր կարսղութիւնները չափելու ուրիշներու հետ, այլ իր բարեկամուհիներուն յարգանքը վաստիելու առիթ մը կուտան իրեն։ Տարակոյս չի վերցներ թէ, իր բարեկամուհին գովեստը, խաղերուն մէջ իր ցուցուցած քաջութեան ու ոյժին համար, իբր զօրաւոր ազդակ կը ծառայեն դաշտային մրցումներու գրգիռին և երկու սեռերը զուտ ընկերական սեպէտաներով իրարու մօտեցնելու։

Կ Ր Ո Ն Ք Ը

Մինչ իր ընկերական յարաբերութեանց մէջ պատամին կը փափաքի իր հակումներուն համաձայն յարաբերութեան մէջ մտնել իր նմաններուն հետ, իր կրօնային կեանքին մէջ ալ ան կը ջանայ յարաբերութեան մէջ մտնել իր Աստուծոյն հետ, այսինքն իր և իր նմաններէն վեր գտնուող մակարդակի մը վրայ յայտակերպուող ոյժին հետ։ Քօ և Շթարպուք քանի մը տարի առաջ իրենց կատարած հետազօտութեան մէջ, գտան հետեւեալ ճշմարտութիւնը և ապացուցին զայն իբր

ընդհանուր սկզբունք մը։ Ա. Քրիստոնեութիւն դաւանողներու ստուար մեկ մասը ընդունեցին քէ Աստուծոյ մէտ ակրագերութիւննեին սկսած և իրենց արբունիքի շրջանին կանխաղոյն մասին մեջ, եւ Բ. Քրիստոնեութիւն դաւանողներու անհունօրհն մեկ փոքր մասը միայն Քրիստոնեութիւնը ընդունելուն վեց։



## Գ Լ Ո Ւ Խ Գ .

### ԱՆԴԱՄԱՋՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԽՅՍՈՒԹԻՒՆ ԱՐՈՒԻՆ ԾՆՆԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԱՑ

#### 1. ԱՆԴԱՄԱՋՆՆՈՒԹԻՒՆ

Մարդկային արուին ծննդական արտաքին գործառնութերը կը բաղկանան առնական անդամէն ու աղավին, որոնց վերջինը կը պարունակէ ամորձիքը:

Արբունքի շրջանը լրացնող պատանիի մը առնական անդամը կը բաղկանայ (Ա.) երկու խոռոչային կամ ցցուեցուցիչ մարմիններէ, որոնք խոռոչային կը կոչուին, որովհետեւ կը պարունակեն բազմաթիւ արեան խողավակներ, որոնք երբ լեցուին ամբողջ գործարանը կը ցցեն և (Բ.) խոռոչային մարմիններուն մէջտեղն ու ներքեւը կը դանուի սպնդային հիւսուածքը, որ գլխաւորաբար կը բաղկանայ միզանցքէն: Այս երեք գլխաւորածե մարմիններուն շուրջը կայ թոյլ հիւսուածքէ կազմուած թաղանդ մը, որուն շուրջը կայ մորթը:

Գործարանին ծայրագոյն մասը մինչև մասնաչափ մը ներս, տեսակ մը գլխածե երեւոյթ առած է և զոր պիտի կոչենք բրդածե, որուն մակերեսին վրայ, մանկանց պարագային, մորթը կրկնակ է, ու կը կոչուի պատճոյք (քըրըսօ): Բրդածեւը ծածկուած է, և պատճոյք խնաթաղանդի բարակ խաւ մ'ունի վրան: Սոյն բրդածեին վրայ խնաթաղանդը կարմիր է, նուրբ ու գէջ, և բազմաթիւ ջղի վերջաւորաթիւններ ունի:

Պատճոյքը, ինչպէս ըստեցաւ քիչ մը վերը, մասնկանց բրդածեւ կը ծածկէ, և կրնայ ամբողջ կեանքի տեւողութեան ծածկուած մեալ: Երբեմն բոլորովին կպած կ'ըլլայ բրդածեին: Ասիկա անբնական է, և երբ որ գիտացուի սոյն կցումը, պէտք է անմիջապէս բժիշկի մը կողմէ կորուի: Բնական պատճոյք մը, չափահաս արուի մը մէջ, պէտք է աղատ ըլլայ բրդածեւէն և ըստ բաւականի թոյլ, ետ կարենալ քաշուելու համար, գիրք մը՝ զոր ցցումի պարագային հաւանաբար կ'ստանայ: Եթէ պատճոյքը բրդածեւին ծայրէն կէս մատնաչափ կամ աւելի գուրս երկնցած է մորթային տառւնի մը ձեւով, և կամ, եթէ բացուածքին մօտ սեղմուած է, այնպէս որ անկարելիր կ'ըլլայ ետ քաշել կամ երբ անդամ մը քաշուի, զժուար կ'ըլլայ ետ իր տեղը դարձնել, այս պարագաներուն մէջ ալ անբնականութիւն մը կայ, և կարող վիրաբոյմի մը ուշադրութեան յանձնուելու է:

Դիւրին է հասկանալ պատճոյքի մը պէտքը նախամարդուն համար, որ զիեթէ բոլորովին անպատճառ էր հանդերձանքէ, բայց քաղաքակրթեալ ցեղերու արդի պայմաններուն մէջ, անտարակոյս, ան ալ աւելորդ յաւելուած մըն է, և բաւական բանաւոր պատճառներ կան անոր մէջտեղէն վերցուելուն: Այս գործողութիւնը (թլվատում), պէտք չէ բնաւ նկատուի անդամատում մը, այլ իրը պարզ առողջապահական միջոց մը, որ եթէ ոչ անհրամմեցա, գոնէ յանձնաբարելի դարձած է այն անբնական պայմաններուն բերումով որոնց ներքեւ կ'ապրինք:

Պատճոյքին ներքեւ կը հաւաքուին, ետեւի գեղձերէն արտադրուած պանրային հոսումները, որոնք եթէ յաւախակի չմաքրուին, պատճառ կ'ըլլան տղոց մէջ զըրշըրուածի: Գիճութեան գլխաւոր պատճառներէն են վերոյիշեալ տեղական բրդածեմները:

Փոքրիկ մանուկներուն մէջ պատճային բարձումը խիստ պարզ գործողութիւն մըն է, և չափահասներուն մէջ բնաւ դժուար կամ վտանգաւոր չէ։ Պատճային բարձումէն վերջ գործարանը մասնաւոր հոգածութեան պէտք չունենար, քանի որ հանդերձեղէնի հետ շփումով բոլոր դիզուած աղտեղութիւնները կ'անհետանան։ Բաց աստի, բրդաներ նուազ դիրագրդիու կ'ըլլայ և որով նուազ ենթակայ տեղական զրգաւումի, և այս պէտով երիտասարդին դժուարութիւնները սեռային առողջապահութեան մէջ, աստիճան մը հարթուած կ'ըլլան։

Առնական անդամը, իր թոյլ վիճակին մէջ, զանազան մեծութիւններ ունի, որոնք յառաջ կուգան ոչ միայն բարեխառնութեան տարբեր պայմաններէ, այլ նաև անհատական մամնայատկութիւններէ։ Գործարանը Են մինչև 15 սանդիմ երկարութիւն կրնայ ունենալ թոյլ վիճակին մէջ և 13էն 20 սանդիմ ցցուն վիճակին մէջ։ Ծննդական գործարանաց մեծութիւնը բնաւցոցիչ մը չկրնար սեպուիլ արուին առնական ուժին։

Ա.մործիքին հաւկիթները արուին ծննդական գեղձարն են, 4 սանդիմէթր երկայնութիւն, 3 սանդիմէթր լայնութիւն և  $2\frac{1}{2}$  սանդիմէթր լայնութիւն ունին։ Այս հաւկիթները կը պարունակուին աղափի տոպրակին մէջ, որուն արտաքին ծածկոյթն է փոթփոթած մորթ մը, որուն ներսը չորս ուրիշ ծածկոց-խաւեր կան։ Հաւկիթներուն ետքին կայ նուրբ մաշկ մը, որ կը շրջապատէ սերմնային լարը, և որ երբ ամործիքը գուրս կ'ելլէ փուրէն, ուր կը կազմուի, կ'իջնէ վար աղափին մէջը։ Հաւկիթները փորէն կ'իջնն, բնականն պայմաններուներք, ներգան գային կեանքին վերջին շաբաթները։ Եւ սակայն կրնան, արասաովոր պատճառաւ մը, մնալ ներսը, և ամիսներով ու նոյնիսկ աարիներով չերեւալ։


Եթէ հաւկիթները արբունքի տարիքին մէջ իսկ երեւան չդան, կարող վիրաբոյմի մը խորհուրդ հարցնել պէտք է։

Հաւկիթին արտաքին խաւը կը կոչուի բնասապիտակային ծածկոյթ, (tunica albuginea)։ Այս ծածկոց-խաւը հաւկիթներուն մէջը մանրաթելեր կ'արձակէ, այսպէս բամնելով գործարանը երկու սերմնաբայթերու (զընդանեւ մասերու), որոնց իւրաքանչիւրը կոնաձեւ է և ծայրը գարձած գէպի հիւսուածքներուն և արեան խողովակներու այն խուրձը, զորս ամէն ոք կրնայ զգայ իւրաքանչիւր հաւկիթին քովիկը։ Այս սերմնաբայթերուն մէջ է որ բազապէրեալ գործողութեամբ մը սերմնակինդանիները կը կազմուին բջջային բաժանմամբ ու ծրումով, զորս հոս նկարագլել անշատելու չէ։

Սերմնակինդանը կրնայ նկատուիլ սեռային արուրջիջը, որուն պաշտօնն է արգասաւորել իգական ծուփել։ Սերմնակինդանը գրեթէ 1 միլիմէթր երկայնութիւն ունի և կը բազկանայ գլուխէ մը, մորմինէ մը և ճօնուն պոչէ մը։ Մարգկային սերմնակինդանին մէջ, զլուխը ծուածեւ է, և մէկ կուլմէն տանձի ճեւ ունի և որից կողմէ մը թերատային (elliptic)։

Քիչ մը վերը մեր յիշած երակախուրձը կը բազկանայ որորուն անցքերէ ու որեան խողովակներէ։ Երբ չիւթահասանքը երակախուրձին մազակերպ խողովակներուն գարձարձիկ անցքերէն անցնի, կը հաւաքուի միակ խողովակի մը մէջ, որ կը կոչուի սերմնուղի (vas deferens), որ սերմնային լարին իրը մաս, կ'անցնի աղափէն, վեր կ'ելլէ աճուկէն ու ստորին որովայնէն անցներէ վերջ, կ'իջնէ վար, միզային փամբուշտին ետեւէն, ուր քիչ մը կ'ընդարձակի, և յետոյ գարձեալ կը նեղնայ, ուր միանալով ուրիշ խողովակի մը հետ, կը պարտուի միզուկին (\*) մէջ։

(\*) առնական անդամը։



Առողին Սեռակին Կործարաններ

## ՍԵՐՄԻՆ ԲԱՂԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Հաւկիքներուն բաժինը

Սերմնակներան	}
Սերմնային զննիկներ կպչուն չուր	

Սերմ

Փամփշիկներուն բաժինը	}
Բնասպիս (Քանակով ամենէն շատը) Այլալին աղեր Չուր	

Ցառաշաղիրին բաժինը	}
Ապիս Ալվալին աղեր Չուր	

Սերմնային փամբշիկները. — Սերմնային փամբշիկները գնդածե գործարաններ են որոնք նախապէս կը կարծուէին թէ հաւկիթներէն արտահոսեալ սերմը պարունակելու կը ծառայեն: Երկու այսօրինակ փամբըշտիկներ կան, և իւրաքանչիւրէն փոքրիկ խողովակ մը սերմնուղիին կը միանայ և այսպէս կը կազմին հիւթացայա խողովակները: Այս երկու հիւթացայա խողովակները կը թափին միզուկին մէջ: Սերմնային փամբըշիկները ունին զեղային պատեր, կ'արտահոսեն իւրեաց պարունակած հիւթը, և հաւկիթներուն հոսանիւրին ոչ մեկ մասը կը մոլորի ու կը տարուի փամբշիկներուն մէջ:

Յառաջադիր զեղծը, որուն մեկ մասը իզախան արգանդին նմանաձև է եւ յաձախ կը իրուի արուին արգանդը, կը գանուի փամբուշտին բացուածքին քովիկը, ու թէ միզանցքէն, և թէ հիւթացայա խողովակներէն կը կարուի իր զիրքով: Բազմաթիւ զեղծային խողովակներ կան, որոնք ժողվելով յառաջադիր գեղձին արտահոսումները, կը վազեն միզակին մէջ:

Յառաջադիր զեղձէն քիչ մը վարօք կան Քառորդ զեղձերը, որոնց խողովակները միզուկը կ'ազդուին յառաջադիր զեղձէն քիչ մը աւելի զէսի վար, միզուկին չիւթ արմասախն մօտ:

## Հ Ա Խ Ո Ս Ո Ւ Ի Թ Ի Կ Ն

— \* —

Մեր նկարագրած գործարաններուն բնախօսութիւնինը սկսած ատեննիս, լաւ ևս է նկատառման կարգը արջել, և այս կերպով աստիճանաբար մօտենալ կարեւորագոյններուն:

Ա. Միզուկը. — Առնական անդամին մէջի անցքը կամ խողովակը կը կոչուի միզուկը, և իր բնախօսական նկատառման ատեն կարեւոր է դիմել թէ ոչ միայն երկու պաշտօն ունի կատարելիք, այլ նաև թէ իր մէկ պաշտօնին կիրաւումը ժամանակաւոր կերպով կ'արգիկէ միւսին կիրաւումը, և աստիճան մը պատրաստութիւն անհրաժեշտ կը դարձնէ:

Երիկամունքէն եկած միզային արտահոսումը հաւաքուելէ վերջ միզային փամբուշտին մէջը, պարբերաբար գուրս կը թափուի միզուկէն: Այս միեւնոյն անցքը պարբերաբար պէտք է փոխադրէ նաև սեռային գործարաններու արտահոսումը:

Բ. Քառորդը զեղձերը. — Միայն սեռային գրգռումի պահուն կը հոսին, և սովորաբար կը հոսին միայն այն պարագային, երբ զրգուումը կը հասնի աստիճանի մը, որ յառաջ կը բերէ ցցում: Հսանիւթը կը բաղկանայ յըտակ ալքալին(\*) հիւթէ մը:

Բնութեան ընդհանուր անահոսութեան մէջ այս ալքալին հիւթին ծառայած նպատակը խիստ կարեւոր է և ամէն երիտասարդ պէտք է լաւ հասկնայ այս բանը:

Կը յիշուի թէ արուին միզուկը իր անցք կը ծա-

(\*) Տեսակ մը քիմիական հեղուկ

ռայէ ոչ միայն մէզին, այլ նաև ծննդական արտադրութեանց։ Մէզը ասի մըն է (թթու մը) և միզուկին մէջէն անոր յաճախակի անցքը, պատճառ կ'ըլլայ որ այդ խողովակը սոյն թիւուղ ծածկուի սովորական պայմաններու ներքեւ։ Սերմնակենդանները խիստ զգայուն են թիւուի (ասի), և իրենց կենսունակութիւնը մեծապէս կը տուժէ ունէ տեսակի թթուէ, մանաւանդ մէզին մէջ զըտնուող թթուէն։ Բնութիւնը այնպէս մը կարգադրած է որ Քառուրբր գեղձերը սերմնային միւս գեղձերէն առաջ հոսելով միզուկին մէջը, կը չեղոքացնեն թթուն և այս կերպով սերմնակենդաններուն համար ալքալինէ անվաստ անցք մը կ'ապահովեն։

Այս կարեւոր պաշտօնէն դատ, կայ նաև Քառուրբր գեղձերուն հիւթը, որ սեռային զրդուման պահուն կ'երեւի բրդածեւին ծայրը իրը մածուցիկ թափանցիկ հեղուկ մը ու կը ծառայէ իրը բնական լսրծուն ծածկոյթ մը, արուին զործարանին։ Էզին կողմէ նմանօրինակ հիւթահոսում մը կրիստորաստէ իր զործարանները սեռային հաղումի, այնպէս որ սոյն նուրբ թաղանդները, մասնաւանդ իգական գործարաններուն մէջ, չեն սկրթուիր։

Շատ մը երիտասարդներ անմնելով Քառուրբր գեղձերուն հիւթահոսումը ու սխալ հասկնուրով անոր բը նոյթը, վախցած են թէ կենսական հիւթ մը կորմնցնելու վասնդին մէջ են։ Այս հեղուկին սխալ մնկնուիրը պատճառ կ'ըլլայ որ բաղմաթիւ երիտասարդներ հաւատան թերթերու մէջ երեւցող այն չառլաթան ծանուցումներուն, որոնցմով կ'ըսուի թէ այդ կերպով երիտասարդները կենսական հիւթ մը կը կորմնցնեն և եթէ մասնաւոր հոգածութիւն չստանան իրենց ծախած գեղերով, ընդհանուր տկարութեան և ծննդական ամլութեան պիտի գատապարտուին։ Այս համառօտ բացարութիւնը Քա-

ուրը գեղձերուն նշանակութեան մասին, բաւական պիտի ըլլայ պաշտպանելու երիտասարդը նմանօրինակ սխալ հասկացողութիւններէ ու շահագործումներէ։

Գ. Յառաջադիր գեղձը. — Թէ յառաջադիր գեղձը անմիջական առնչութիւն մ'ունի սերնդադործման հետ, յայսնի կ'երեւի սա իրողութիւնն թէ, այն արու կենդանեաց մէջ, որոնք արբունքն առաջ որձատութեան ենթարկուած են, յառաջադիր գեղձը կը չորնայ ու զրեթէ կ'անհետի։ Ի՞նչ է ուրիմն այս գեղձին պաշտօնը։ Քառուրբր գեղձին նման միայն սեռային զրգուման պահուած կ'արտահոսէ։ Այսպիսի զրգուման մը պահուն, իր խողովակները իրեն մասնայտուկ հոսանիւթով մը կ'ողովախն, և սերմնահոսումի ժամանակ բազմաթիւ խողովակները կը պարպեն իրենց պարունակութիւնը միզուկին մէջ, որպէս զի խառնուին սերմին հետը։

Յառաջադիրին հոսանիւթը կը բազկանայ բնասապիտակային և ալքալին աղերու ջրու լուծոյթէ մը և այնքան կը նմանի սերմնային փամբչափիկներուն հոսանիւթին որ, նկատի պիտի առնենք զայն փամբչափիկներուն պաշտօնին քննութեան հետ մէկանդ։

Դ. Սերմնային փամբչիկները. — Սերմնային փամբչիկները անընդհատ կ'արտահումն ։ Հոսանիւթը կը բաղկանայ բնասապիտակային ու ալքալին աղերու ջրային լուծոյթէ մը։ Այս հոսանիւթը, ինչպէս նաև յառաջադիր գեղձինը կը թափին միզուկին մէջ սեռային կը զուցքի (պոոթկումի) վայրկեանին, ու միզուկին մէջ իրենց անցած պահուն կը խառնուին ամործիքի հուկիթներուն արտահոսման հետ։ Այս խառնութին է որ ծանօթ է սերմ անուամբ։

Կը կարծուէր թէ սերմը ամբողջովին հաւկիթներէն կ'արտահոսուի և թէ հաւկիթները անընդհատ կ'արտա-

հոսեն և փամբչտիկները կը ծառայեն իբր ընդունարան հետղնետէ զիզուած այդ սերմին։ Շթայնախի և ուրիշներու քննութիւնները կը բնկանեն հին վարկածը և կ'ապացուցանն թէ սերմը երեք որոշ աղբիւրներու խառնուրդ մէ՛, թէ ամորձիքը իր բաժինը սերմին մէջ կ'արտահոսէ միայն սեռային զրգումն պահուն, մինչ սերմնային փամբչտիկները շարունակաբար արտաղրելով իրենց հոսանիւթերը, պարզերաբար կը լեցուին ու կ'ընդլայնին։

Հիմա, հարցնենք թէ ի՞նչ է պաշտօնը փամբչտիկներէն և յառաջադիր զեղձէն արտահոսած այս բնասպիտակային և ալբալին աղերտն։ Ինչու բնութիւնը այսպիսի հոսանիւթ մը կը պարաբառէ։ Սերմնակնդանները յաճախ օրերալ կը մնան էզին զրծարաններուն մէջ, մինչեւ որ գտնեն ձուիկը և արդասաւորեն զայն։ Այս մէկ քանի օրուան մէջ սերմնակնդանները քիչ ոյժ չեն վատներ իրենց ուժգին ու խելար շարժումներավը։ Այժմի այսպիսի վաճառումի մը համար պէտք է մնունդ և գրգիռ ստանան։ Մնունդը կը հայթայիտուի փամբչտիկներուն և յառաջադիր զեղձին արտահոսած բնասպիտակէն։ Գրգիռ կը հայթայիտուի այս զեղձերուն արտաղրած աղերէն։ Լոէպի և ուրիշներու գերջին քրնութիւնները ապացուցած են հանքային աղերու կարեւորութիւնը ապրող բիջներ զրգուեռու մէջ։ Կարեկի չէ յիշել լաւագոյն օրինակ մը, լուսաբաներու համար այն աղղեցութիւնը քան այն՝ զոր ունին սերմին մէջ գանուզ աղերը սերմնակնդաններուն զրծառնէութեան վրայ։

Փամբչտիկներն ու յառաջադիր զեղձը կրնան նկատուիլ իբր մատակարարները սերմնակնդաններու բանակն։ Փամբչտիկները կը զիգեն պիտոյից պաշար մը, որ կարձ պայմանաժամէ մը զերջ պիտի ուզուի։ յառաջա-

գեր զեղձը կը ներկայացնէ գործատուն մը ուր պիտոյից բաւականաչափ պաշար մը նմանապէս կրնայ պարաստուիլ կարձ միջոցի մէջ։

Սերմնային փամբուշաններուն պարբերական ընդլայնումը առողջապահիկ միծ կորեւորութիւն ունի, ուսափ պէտք է զայն րաւ ըմբաննեն այն ամէն երիտասարդները, որոնք բնականն սեռային կեանք մը պիտի վարեն։

Այս զրծարանները, նման մարմնոյն բոլոր միւս զրծարաններուն, ունին երկու անսովոկ ջիպ, որոնցմէ մին կ'անցնի վեր, գէպի սոնաչարը և կը փախաղրէ լուրիր որոնք զրծարանին վիճակը կամ ու է տեղեկան զրբգուումի բնոյթը կը տեղեկագրեն, միւռը անցնելով լար, ողնաշարէն կը բերէ հասողական և շարժիչ զրդումներ։ Հոսողական զրդումները զրեթէ անընդհատ են, և հետեւարար այս զեղձերը շարունակաբար կը հոսին և ինչպէս վերը բառեցաւ, պարբերաբար կ'ընդլայնին։ Շարժիչ զրդումները կ'անցնին փամբչտիկներուն պատերուն մէջի մասններուն, և այս վերջիններուն զօրաւոր ջղաճգական կծկում մը պատճառելով սերմին արտահոսան վարկեանին, կը ժայթքեցնեն փամբչտիկներուն պարտականութիւնը միզուկին մէջ ճիշդ այն վայրկեանին, երբ երակախուրձը, սերմնուզին և յառաջադիր զեղձէ կը պարզեն իրենց պարտնակութիւնները միզուկին մէջ։

Սրգ, սերմնային փամբչտիկներէն մէկնող զգացուն ջիպերը, որոնք կ'երթան ցցումի և հոսմամ վերին կեղմները, կ'աղղուին փամբչտիկներուն մէջ եղած ուեէ արտակարգ ճնշումէ։ Արտակարգ ճնշում կրնայ յառաջգալ, կամ զիզուած հոսանիւթին պատճառած ընդլայնումէն, կամ թափանին չոփազանց ընդլայնումէն և կամ միզային փամբուշախին ճնշումէն։ Այս զրդումները շատ աւելի աղղուօրին կը զործեն, եղբ ենթական քնա-

ցած, և մանաւանդ կոնակի վրայ սպառկած է : Այս զրգիւոց կը պատճառէ ցցում, որուն սովորաբար կ'ընկերունաց տպական երազ մը, և այս ամենուն գաղաթնակէալ կ'ըլլայ հոսումը փամբշատիկներուն պարունակած հիւթին, և հետեւանքը կ'ըլլայ մեղմացումը այն ձնչումին՝ որ պատճառ եղաւ այս ամենուն : Այս երեւոյթը կը կոչուի «զիշերային հոսում», «երազակիորդութիւն» եային :

Վէքի, մարդակաղմութեան, առողջարանութեան և սեռային գործարանաց ախատաբանութեան մասնադէամը, կ'ըսէ թէ գիշերային հոսումը բնախօսական պարզ երեւոյթ մննէ, որուն նորատակին է մեղմել մերմնացին փամբշատիկներուն ձնչումը, և թէ բնականոն պայմաններու մէջ կանոնաւոր ժամանակամիջոցներով տեղի կ'ունենայ, երկուքէն մինչև չորս շաբաթ տեւողութեամբ, թէեւ անհատէ անհատ այս ժամանակամիջոցը կը տարրերի միւս կողմանէ, ասոնցմէ բուռական աւելի երկար կամ կարծ ժամանակամիջոց մը տիտաւոր չպիտի նկատուէր : Վէքի կը նկարագրէ բնական գիշերահոսում մը, սապէս, — ցցում մը, տպային երազներ և ժայթքում մը, երբ ննթական բոլորովին անդիտակից է ու միայն ժայթքումին կ'արթնայ : Բնականոն պայմաններու տակ, ննթական հետեւեալ օրը հանգստացած ու առողջ կ'զգայ, և պէտք է բոլորովին ազատ ըլլայ զըլխուցաւէ, ընկծումէ և թուլութիւնէ :

Հեղինակը, բաւական թիւով առողջակազմ մարդոց հարցապնդումովը համոզում զոյցուցած է թէ երբեք անբնական չէ որ զիշերային հոսումներ երկու ամիսը անդամ մը պատահին : Ընդհակառակը, անսովոր չէ նաև որ անոնք տառը օրը անդամ մը, կամ նոյն խկ շաբաթը անդամ մը պատահին ու տակաւին բնախօսական պայմաններէն դուրս չսեպուին : Սակայն և այնպէս,

երբ հոսումները շաբաթը անդամ մը կամ աւելի յաճախ կը պատահին, պէտք է իբր անդնական նկատութին, եթէ անոնց հետեւանքը կ'ըլլայ զիսու ցաւ, թուլութիւն, ու խոնջած վիճակ : Դիտուած են պարտղաներ, ելք գիշերային հոսումները շաբաթը մինչեւ երեք անդամ պատահած են, և յետոյ մինչեւ երկու կամ չորս շաբաթ առանց հոսման աեւողութենէ վերջ, դարձեալ սկսած են միեւնոյն յաճախութեամբը, ու դարձեալ հետեւած հանգստի ըջանի մր : Այս երեւոյթը անհատական մասնայատկութիւն մ'է լոկ, ու պէտք չէ նկատութիւնաբան :

Տկարութիւն և զիսու ցաւ պատճառող ու խիստ յաճախ տեղի ունեցող հոսումներ յաւաջ կուգան դիւրագրգութենէ, կամ ծննդական գործարանաց, մանուշանդ սերմնային փամբշտիկներուն և խողովակաց պինդու զօրեղ չըլլալէն : Այս զիւրագրգութիւնը ու զօրութեան նուազումը յաճախ առաջ կիմութենէ, թէեւ կրնայ նաև յաւաջ զալ կանանց հետ չափազանց յարաբերուելէ, և երկու պարագային ալ այս արդիւնքը՝ պատճառներուն, այսինքն այս զէշ ունակութիւններուն զաղրելէն վերջը երեւան կուգայ :

Խիստ յաճախաղէպ գիշերային հոսումներու որիշ մէկ պատճառն ալ, որ բոլորովին յարաբերութիւն չունի գէշ ունակութեանց հետ, սեռային գործարանաց զրգառութիւնը կամ մեքենապէս զրգութիւնն է — թէրես միզուկին, մասնաւորապէս թազանդային ու յառաջադիրին մասին վրայ — որ յաւաջ կուգայ մէզին մէջ գանուող քիմիական բաղադրութիւններէն (oxalid) : Օքսալաթները (թթունչային մասերը) մէզին մէջ կը գանուին սուր, անկիւնաւոր բիւրեղներու ձեւով և միզուկին վերի մասին նուրբ թաղանդին վրայ մանաւանդ չափազանց զըրգը-

ոիչ ըլլալ կը թուին։ Այս իրազութիւնը թէ, այն պարագաներուն մէջ, երբ հոսումներուն պատճառը չին գէշ ունակութիւններ, բայց միշտ գանուած են այսպիսի բազում բիւրեղներ, իրազութիւն մ'է որ մարդուն մտածել կուտայ թէ զրգութեան պատճառները բիւրեղներն են։ Սակայն, պէտք չէ անտես ընհնք սա իրազութիւնն ալ թէ, այս բիւրեղները պարզապէս յառաջ կուգան խիստ յաձախադէպ հոսումներէ, և թէ մէզին մէջ օքսալութներուն ներկայութիւնը կրնայ յառաջ գալ մարմնոյն մէջի մննդական գործազութեանց մէկ անկարգութենէն, անկարգութիւն մը՝ որ ոչ միայն սեւային գործարաններուն զրգումը կը պատճառէ, այլ նուև այս բիւրեղներուն ներկայութիւնը յառաջ կը բերէ։

Երբ սերմնային փամրշափիկները չափազանց ընդունուած են, յաճախ կը պատահի որ պղիքներուն ծագրէն անովէտ մարմնի մնձ զանգուածի մը անցքը, սերմնային փամրշափիկներուն փրայ իր պարզ ճնշումովը քանի մը կաթիլ կամ թերեւս թէլի զգալի մը չափ կը հոսեցնէ փամրշափիկներուն պարունակութիւններէն։ Ասելու պիտի կոչուէր ակամայ հոսում մը, բայց պէտք չէ նկատուի իրը սերմի կորուս մը։ Պարզապէս սերմնային փամրշափիկներուն արտահոսումն է, և զայն կորսնցներով մարդ կամնցուցած չըլլար կենսական հեղուկ մը, կամ հեղուկ մը՝ որ վերսախն պիտի ծծուէր մարմնոյն կողմէն, այլ՝ կորսնցուցած կ'ըլլայ հեղուկ մը, որ իր կարգին, քանի մը որ վերջը, գիշերային հոսումի մը ժամանակ գուրս պիտի ելլէր արզէն։

Այս մանրամասութիւնները բացարուած են, որպէսդի երիտասարդը լաւ մը հասկնարով իր ծննդական գործարաններուն բնախօսութիւնը, չվախնայ թերթերու մէջ երեւցող այն չարլաթան ծանուցումներէն, որոնք կը

վախցնեն երիտասարդը հաւաացներով իրեն թէ այս կերպով «կենասական հիւթ մը» կրտնցներու վասնգին մէջ է, թէ «կրտսւած տռնականութեան» մը զո՞ն է թէ «ընդհանուր անկարութիւնն ու ամրութիւնն» կը մասնէ ինքինքը։ Երբ ընդհանուր իրազութիւն մը, կենասական հիւթին ակամայ կորսւատը, նոյն իոկ ծննդային հիւանդութեանց մասնադէաներու համար հազուադէպ բան մըն է, և այս հազուադէպ պարագաներուն մէջ ալ, պատճառն է սեւային յարաբերութիւննց չափազանցութիւնը և կամ վներական ախամրէն մէկուն հասեւանքը։

Ե. Ամենաձիիի հաւկիրները։ — Ամորձքային հաւկիթ-ներուն բնախօսութեան վրայ կարելի չէ լու գաղափար մը կազմել, եթէ նախ չյայաբարարներ իրը ընդհանուր բնախօսական օրէնք մը թէ, հաւկիրները կ'արտահուն իրենց հիւրը մի միայն սեւային գրգուման պահուն։ Միենայն ընդհանուր սկզբունքը կը յարմարի բոլոր գեղձերուն, այսինքն թէ ամէնքն ալ կ'արտահուն մասնաւոր գրգուման մը վրայ։ Այս օրէնքին հպատակելով, հաւկիթներն ալ միայն սեւային զրգուման ատեն կ'արտահուն։

Սեւային գրդուումը կրնայ սատրաբամնութիւ երկու ընդհանուր գոսակարգերու, այսինքն, զիտակից սեւային գրգուում և անզիտակից սեւային գրգուում։

Դիտակից սեւային գրգուումը մասամբ հոգեկան ու մասամբ ֆիզիքական է։ Ֆիզիքական գրգուումը յառաջ կուգայ հակառակ սեւէն մէկու մը հետ ֆիզիքական մերձաւորութենէ։ Դիտակից սեւային գրգուումի ֆիզիքական և հոգեկան (մտային) վիւլերը այնքան սերտորէն կապուած են իրարու, որ խիստ գժուար է անոնցմէ միոյն վրայ խօսիլ առանց անդադար ակնարկելու միւսին, և այս առթիւ կրնայ ըսուիլ թէ հսկաւակ

սեռի պատկանող երկու անհատներու մտային վիճակը մնձալէս կ'ազդէ իրենց սեռային գործարանային գրգըռամանց, եթէ իրարու մօտ բերուին:

Գալով ստորին կենդանեաց, երբ էդ մը տաք ու գրգոնեալ վիճակի մը մէջ մօտեցուի արուի մը, երկու կենդանեաց մէջ ալ կարծես իր գիմայշինին հանգամանքին ու գիրքին գիտակցութիւնը կայ, և երկուքն ալ տակաւ առ տակաւ ֆիզիքական հպումով և հաւանաբար նաև մտային պայմաններով սեռային գրգուման այնպիսի աստիճանի մը կր հասնին, որոն բնական և վերջնական սրդինքը կ'ըլլայ զուգաւորում, որով արուին սերմը կը ժայթքէ էդին գործարաններուն մէջ:

Դիւրաւ կրնայ հսուկցուիլ թէ այն մարդոց մէջ ալ, որոնց ընկերական յարաբերութիւնները կը թույտարեն զուգաւորում, այն առևն ֆիզիքական մերձաւորութիւնը, և զանազան փայփայումները իրենց բնական ընթացքովը, քայլ առ քայլ յառաջ կը բերեն սեռային գըրգում, սեռային իզձ, որուն արդիւնքը կ'ըլլայ այն՝ ինչ որ էր ստորին կենդանեաց մէջ:

Գալով գարձեալ հաւկիթներուն պաշտօնին, կրռնանք ըսկել թէ, սեռային գրգուումի սոյն զանազան աստիճաններուն, անոնք արտադրելու վրայ են բիւրաւոր գեռածին սերմնակենդաններ, որոնք արձակուելով, կը սուրան թէ իրենց իսկ խելար շարժումներովը և թէ երակախուրձին մէջի խողովակներուն մաղերէն և սերմնուղիին մկանային կծկումներէն մղուած, դէպի խողովակին ընդլայնեալ մասը: Եթէ սեռային գրգուման ժամանակամիջոցը տառնեհինգէն երեսուն վայրկեան տեէ, բոլոր խողովակային գրութիւնը երակախուրձէն սկսեալ մինչեւ ընդլայնեալ մասը, կը լիցուի արտահոսեալ այս արտադրութիւններով: Այս հոսանիւթը կը բազկանայ կեան-

քոտ, շարժուն սերմնակենդաններէ, սերմնային գնալիկներէ և լորձնահիւթէ: Այս վերջինը կ'արտահոսուի երակախուրձին ու սերմնուղիին խողովակներէն, այսպէսով ամորձիքը միայն արտադրած կ'ըլլայ սերմնակենդանները, և սերմնային գնալիկները ու քիչ քանակութեամբ ալ հեղուկ, որ նպատակ ունի սերմնակենդանները հաւկիթներէն գուրս ծփայնելով դէպի խողովակները հոսեցնելու:

Սեռային կտղուցքի վայրկենին է որ աեզի կ'ունենայ ինչ որ կը կոչուի, սերմին հսումնի: Այս գործողութեան մէջ, ընդլայնեալ մասին, սերմնուղիին և երակախուրձի խողովակներուն պարունակութիւնները, ինչպէս նաև սերմնային փամբչակներուն և յառաջագիր գեղձին խողովակներուն պարունակութիւնները ջզագգական մկանային կծկումներով կը թափին միզուկին մէջը, և միզուկին ներքին մկաններուն կծկումնիը, դուրս կը ժայթքեն միզուկին ծայրէն: Այսպէս, հսումնի գործողութեան մէջ, սերմնային երեք աղբիւրներու խառնուրդը կայ, այսինքն, ամոռնձային, փամբշչիկային և յառաջադիր գեղձինը:

Ենթագիտակցական առուային գրգուութիւն. — Ենթագիտակցական սեռային գրգուումի ատեն ոչ ցցում ՚այ, ոչ ալ սեռային գրգուումի մասին ու փիզիքական նշան:

Երբ սեռային ակտակէտով, չափահաս անհատ մը քիչ չափ սերտ յարաբերութեան մէջ կը մտնէ հակառակ սեռի պատականող հասուն անհատի մը հետ, այնպիսի պայմաններու ներքե, երբ երկրորդական սեռային յատկութիւնները աղաս, անկաչանդ կրնան գործադրուիլ, ո և է տարակայս չմնար թէ երկուքն ալ ենթագիտակցական սեռային գրգուում մը պիտի ունենան, որ փիզիքապէս ու հոգեկանապէս (մատաւորապէս) պիտի աղջէ անոնց վրայ, իրենց սեռային գործարաններուն

Անթագիտակցական ազդեցութիւններէն մլուած : Դիւրին է երեւակայել, օրինակի համար, թէ ձմեռ առեն չմըշ-կարանի մը մէջ (skating) երիտասարդ մը հանդպի օրիորդի մը, որուն հանդէպ ան սակեզծ հիացում ու յարգանք ունենայ ու օրիորդն ալ իր կողմէ համապատասխանող հիացում մը ու յարգանք մ'ունենայ : Կրնան ամբողջ իրիկունը մէկտեղ չմշկել, խօսերով միւնենոյն ժամանակ քաղաքական, գեղեցիկագիտական կամ փիլիսոփայական հարցերու շուրջ, և օրիորդը կրնայ ինքինքը իր բնկերոջ զօրեղ բազուկին վրայ տարուած, օրորուած զգալ : Այս ամէնը ծայրայելորէն հաճելի և զուարիթայնող է օրիորդին համար, և սակայն ան բնաւ չզգար ո և է սեռա ին զրգիս : Նմանապէս և երիտասարդը, խիստ սարձր հաճոյք մը կրնայ զգալ իր երիտասարդ բարեկամունիքին ընկերութենէն — իր ուսին վրայ անոր ձեռքին ճնշումէն, անոր մարմնին ու անդամներուն զուարիթ ու չնորհալի շարժումներէն, ժպիտէն, աչքերուն փայլէն ու փափուկ ձայնէն : Այս ամբողջը իրն անպատմելի բերկրանք մը կը պատճառէն, զոր անկարող պիտի ըլլար ինք վերլուծելու, նոյն իսկ եթէ ուզէր :

Իր, ինչպէս նաև օրիորդին մէջ, զիտակից սեռային զրգութիւն բնաւ տեղի չէ ունեցած . ոչ մէկուն, ոչ միւսին մտքին մէջ ո և է սեռի կամ սեռային զործարաններու մտապատկեր ներկայացած է, և սակայն առանց ո և է կասկածի, երկու անհատներուն ալ սեռային գործարանները այս միջոցին քիչ շատ զործած են, այսինքն, ենթակայ եղած են ենթագիտակից սեռային զրգումն :

Սրուին մէջ, ամորձիքի հաւկիթները սկսած են զործել, թէև ոչ այնքան եռանդուն որքան զիտակից

սեռային զրգուումի պարագային, և գեղձին այսպէս գործելովը բաւական քանակութեամբ հեղուկ կազմուած է : Այս տոթիւ ներկայացող ամենէն բնական հարցումն է — ի՞նչ կ'ըլլայ այս հեղուկը : Հաւանական չէ որ մեծ թուով սերմնակենդաններ արձակուած ըլլան, բայցի միայն անհնացմէ, որոնք կարողացած են անցնիլ սերմնուղիէն ընդլայնեալ անցքը : Հաւկիթներուն հեղուկ արտահոսումը հաւանաբար դուրս չելլեր հաւկիթներէն, ալ կը վերածուի : Հաւկիթներուն այս խորհրդաւոր ազդեցութեան փուկրէն շատերը թէե չեն հասկցուած դեւ, սակայն այսքանը յայտնի է թէ, հաւկիթները անսակ մը ներքին հոսում կը կատարեն, և այս ներքին հոսումը տեղի կ'ունենայ ճիշդ այն տեսակ զրգաման մը տան, զոր նկարագրեցինք ենթագիտակից սիրային զրգումն հատուածին ներքեւ :

Ենթին հոսում ըստուածը արտահոսումն է գեղձի մը, որ կը թափի արեան կամ աւշային զրութեան մէջ, մինչ արտաքին հոսումը խողովակներուն միջոցաւ դէպի դուրս կը թափուի : Երկու գեղձեր կան, որոնք մի միայն ներքին հոսում յառաջ կը բերեն, և այս հոսումները թափուելով արեան ու աւիշին մէջ, խորապէս կ'ազդեն մարմնոյն մնուցման վրայ : Լորձեան ու ստամոքսային գեղձերը միայն արտաքին հոսումներ կ'ունենան, որոնք կերակուրին վրայ յարձակելով, կը մարսեն զայն : Լուարգը, բանկրասն ու հաւկիթներն թէ արտաքին և թէ ներքին հոսումներ կ'ունենան : Հաւկիթներուն արտաքին հոսումը այն է որ սերմնահոսութեան ատեն դուրս կը թափի, ինչպէս նկարագրուեցաւ քիչ մը վերը . հաւկիթներուն ներքին հոսումները կը բազկանան հասուն անհատներու հաւկիթներուն արտահոսուած նիւթերէն, ուրոնք, արեան մէջ թափուելով, խորապէս կ'ազդեն ան-

հատին թէ ֆիզիքական և թէ հոգեկան (մասյին) գործացման վրայ :

### Ա. Ռ. Ն. Ա. Կ. Ա. Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Թերեւս լաւագոյն օրինակը, բացատրելու համար այս ներքին հոսման կարեւորութիւնը, արու ձիու, օրինակն է :

Չատ երիտասարդներ ձիալաճառանցներու կամ ագարակներու մէջ ազնուազգի յովատակներ (արուձի) տեսած են : Մարդ չկրնար առանց հիացումի դիտել այս պատուական կենդամները, և նոյն իսկ չկրնար չահարեկի անոնց անհման ֆիզիքական ոյժէն, մարմիի գեղեցկութենէն և շարժումներու չնորհալիութենէն ու ուժգնութենէն : Զիերու սեսին ֆիզիքական իտէալն է ան : Իր ոյժին և գեղեցկութեան ալրիւրը ի՞նչ է :

Այն ֆիզիքական յատկանիները զորս մարդ կը դիտէ թէ յատուկ են յովատակին, ամենէն առաջ անոր կուրծքին ընդարձակ լայնքն ու խորութիւնը, ուսի ու մէջքի մսաներուն հոկայ զանգուածը և յաղթակամար վիզը, հրացայտ աչքերը ու արտատրուզի բաշն ու պոչն է : Երկրորդ, նկատի առներով գործքի առաւելութիւնները, աչքառու են դիւրաշարժութիւնը և յայտնի կենսունակութիւնը որ կ'արտայայտուի իր քալուածքին ու յաճախակի վրնչւններուն մէջ : Խորագէտ զննող մը անպատճառ կը բազգատէ այս յովատակները ձիափառախն քով, կամ ագարակին մէջ, մալուաճներուն(\*) հետ :

Ագարակի մը մէջ, երկու քուռակներ կրնան կատարեալ եղբացըներ բլազ, —միւնոյն ազնուազգի յովա-

տակէն ու ազնուազգի մօրմէն ծնած : Իրենց երկու տարեկան հասակին մէջ, այս երկու մարուկները կրնան միւնոյն վեճեկին մէջի սիսեռներուն պէս նման ըլլալ իւրարու : Այս երկու խոստմնալից կենդամներէն մին, քնաւորութեան կամ ուեէ յանձնարարելի յատկութեան մը համար կ'ընտրուի որ կատարեալ մնայ, տուանց անգամատուելու, ու ծնունդ տայ իր այդ ազնիւ սեռին : Միւսը կ'ընթարկուի անամսաբոյժին նշղարկին և կը զրկուի իր ամործիքէն —այսինքն արտի սեռային գեղձերէն : Այս գործողութեան օրէն սկսեալ, այս երկու կենդամները, (ամէն կերպով նման, սա տարբերութեամբ միայն թէ մին լման է իսկ միւսը կորսնցուցած վերայիշեալ գեղձերը) հիմնապէս բոլորովին տարբեր գիծերու վրայ կը զարդանան : Յովատակը կ'աճի, կը զօրանայ իր երրորդ տարին ու կ'ըլլայ այն ազնիւ կենդանին զոր նկարագրեցինք վերը : Այս երրորդ տարին իր արբունքի տարին է, ու այն փոփոխութիւնները որոնց կ'ենթարկուի ան ֆիզիքապէս ու մտաւորապէս, զրեթէ ծցիւ նմանօրինակ են այն փափոխութեանց որոնց մարդ կ'ենթարկուի իր արբունիքի շրջանին : Անդամատեալը, ընդհակառակին, կը մեծայ կ'ըլլայ կենդանի մը, որ ամէն տեսակէտավ չէզոք է : Ֆիզիքապէս իր մարմնը կ'ըլլայ ծիփ ծիշդ էզի մը մարմնը : Խառնուածքով կ'ըլլայ համբերող, աշխատող բեռան ձի մը, և թէեւ լաւ հոգածութեան ներքե բաւական կեանք կրնայ ցուցնել, երբ լծուած է, սակայն շատ քիչ անգամ ուեէ հետաքրքրութիւն ցոյց կուտայ ուրիշ արու կամ էզ ձիու համար, և արծտավայրին կամ ագարակին մէջ իր չեղպացեալ սեռային խառնուածքը յայտնի կ'երեւի : Եւ թէեւ կրնայ քիչ շատ կուտիլ ախոռին մէջ յարդամանին առջև, կերի համար, և սակայն իր նմաններէն տկա-

(\*) Ամործիքը կտրուած, հանուած

րի մը պաշտպանութիւնը բնաւ չստանձներ, և մէկ յովատակ բաւական է ասոնցմէ հարիւրը փախցնելու:

Խոհուն դիսողը չկրնար չնշարել թէ ինչ բան յառաջ բերած է այս երկու կենդանիներուն մէջ անձան այս հիմնական տարբերութիւնը. ինդրայն լուծովը պէտք չէ շատ հետուն փնտուի: Արբունքի ըրջանին ոկիզրէն մինչեւ ծերութեան տարիքը թեւակոխելը, յովատակը կ'ստանայ իր ամորձիքներէն այն հիւթը զոր քիչ մը վերը կոչեցինք ներքին հոսում:

Բնախօները ջանացած են գանել թէ ճիշդ ի՞նչ նիւթ է որ ամորձիքներէն կը պատրաստուի ու կը վերածուի աւիշին ու արեան մէջ: Կրնայ ըլլալ Սրբութին կոչուած հիւթ մը, բայց ինչ որ ալ ըլլայ ան, բնախօները կ'ընդունին թէ ամորձիքը կը պատրաստէ այսպիսի հիւթ մը որ արիւնէն ծծուելով կը ապառի գէսլի ուղեղ և ողնաշար, և հոն յառաջ կը բերէ վերսպիշեալ խօրունկ փոփոխութիւնները: Ահա, ուրիմի, գտանք յովատակին ուժին ու գեղեցիկութեան ազրիւրը:

Ինչ որ ճշմարիտ է ձիուն համար, ճշմարիտ է նաև մարդուն համար: Պատանին իր արբունքի ըրջանին կ'սկսի ընդունիլ իր ամորձիքէն այս ներքին հոսանիւթը, որ պատճառ կ'ըլլայ իր բավանդակ առնական կարողութեանց զարգացման: Մարդութեան յատկանիւը եղող յատկութեանց ամբողջութիւնը կը կոչուի Սոնականութիւն: Առ ի զորյէ լաւագոյն բառի մը, այս բառը կը զործածուի ցուցնելու ու է կենդանւոյ մը որձային յատկութանց համադումարը. ինչպէս մարդուն, այնպէս ու յովատակին որձային յատկութիւնները կը կոչուին առնականութիւնը:

Խոհուն ու հարցապնդող երիտասարդը բնականաբար պիտի ուղէ գիտնալ թէ դաշտին անսասունէն առ-

նուած այս գասը, իր բոլոր մանրամասնութիւններով կը յարմա՞րի նաև մարդուն. թէ մարդն ալ արդեօք առանց ու և աղուեսատական կամ անբնական միջոցներու, կատարեալ առնականութիւն մը կրնայ զարգացնել: թէ ձիուն պէս, ան ամիսներով ու տարիներով իրաւութիւն մը կրնայ պահել առանց վնասելու իր առնականութեան ու իր ընդհանուր ֆիզիքական կարողութեանց: Բժշկութեան բացարձակ պատասխանը այս հարցմանց պիտի ըլլար հաստատական:

Անդամատեալ ձիուն ձիչդ նմանը կրնայ գանուիլ Արեւելեան ներքինին մէջ: Եթէ մարդուն արուն անդամատուի արբունքէն առաջ, կ'ըլլայ այնպիսի մէկը, որ այնքան տարբեր է առնական մարդէն որքան անդամատեալ ձին յովատակէն. — մէկը, որուն ֆեզիքականը շատ մը բաներու մէջ կը նմանի կոնջ մը, և որուն խառնուածքը յայսնի յատկանիցներ կը կրէ սարկութեան ու նախաձեռնութեան ողիի պակասի:

Ամորձիքին արտաքին հոսումը կը տարբերի ներքին հոսումէն սա բանով որ, առաջինը կը պարունակէ սերմանակենդաններ. կրնայ ըլլալ որ ուրիշ տարբերութիւններ ալ ըլլան, և սակայն, ընդհանրապէս կը կարծուի թէ արտաքին հոսանիւթին մէջի նիւթերէն մէկը կամ աւելին կը գտնուին նաև ներքին հոսանիւթին մէջ: Եթէ այս այսպէս է, ուրիմի յայսնի կ'ըլլայ թէ ծայրայել սենային յարաբերութիւնը և զինութիւնը մարմնէն կը քաշեն այս կենսական նիւթը, որ անհրաժեշտ է արտադրելու կամ պահելու առնականութիւնը

Չկրնար բառիլ թէ առնականութեան վիճակը երբ անդամ մը ձեռք բերուի, կը չարունակուի — ոչ — պէտք է որ ան պահպանուի: Պահպանուելու համար, պէտք է այս կենսական հիւթը որ ամորձիքներէն կ'ար-

տաղրուի, շարունակաբար ծծուի արեան մէջ։ Երբ անգամ մը, մարդ մը կամ տղայ մը հասկնայ ասիկլա, այս ակներեւ կ'ըլլայ իրեն համար թէ, իր առնականութեան շնութիւնն ու փճացումը աստիճանն մը իր ձեռքն է։ թէ ան պարզապէս բնութեան մէկ անսպառ պարզեւը չէ։ թէ, անտառի մը կամ ածխահանքի մը պէս, եթէ հոգածութեամբ չինամուի, կ'սպառի։

Իմշկութեան մէջ ծանօթ իրողութիւն մ'է թէ էգին մէջ ձուարանները այն ազգեցութիւնը կ'ունենան իր զարգացման վրայ, ինչ որ արուին մէջ ամորձիքները կ'ունենան։ Այս պատճառաւ, վիրաբոյժ մը բնաւ պէտք չէ էզի մը սեռային գեղձերը հանէ, ցորչափ ախտաւոր չեն և վտանգ չեն սպառնար անհատին կեանքին։ Եթէ քսանեւհինգ ատրեկան կնոջ մը երկու ձուարաններն այս հանուէին, շատ կանուխէն ան ծերի երեւոյթ պիտանէր։ Եթէ արբունքէ առաջ, էգի մը երկու ձուարաններն ալ հանուին, անոր մէջ կը զարգանան աւանական յատկանիշեր և ան կը կորմնցնէ այն յատկանիշները, որոնց ամբողջութիւնը առ ի չգոյէ լաւագոյն բառի մը, պիտի կոչենք իգականութիւն։



## ԳԼՈՒԽ Դ.

### ԶԱՓԱՀԱՍ ԱՐՈՒԻՆ ՍԵՌԱՅԻՆ ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ



Կարելի չէ մարդկային արուին համար բանաւոր և ընդունելի սեռային առողջարանութեան սիստեմ մը յօրինել, առանց միշտ դիմելու սանաւորաց ստորին դաստիարակերուն և նախնական ընկերացին պայմաններու։

Մարդկային արուին սեռային գործարաններուն անդամագնութեան ու բնախօսութեան մէջ, զոր պարզեցինք, ակներեւ եղած ըլլալու է թէ մարդը բազում ուրիշ սանաւորներու հետ հասարակ բաներ ունի, և թէ մարդուն ֆիզիքական և իմացական ստորոգելիքներուն կարելի չէ ծանօթանալ, առանց որոշ կինդանիներու կեանքին նմանօրինակ փուլերը ուսանելու։

Այն բոլոր փոփոխութիւնները զորս բնութիւնը ներմուծեց չափահաս արուին ֆիզիքական և իմացական զարգացման մէջ, այնպիսի հանգամանք մը ունէին որ կարծու անհատը կը յարմարցնէին կին մը և զաւակներ մնուցանելու ու պաշտպանելու։ Երիտասարդը, իր քսանեմէկէն քսաներեք տարեկանին՝ հասած կ'ըլլայ զարգացման այն աստիճանին, երբ սովորաբար, կարող կ'ըլլայ ֆիզիքապէս և նկարազրով, հիմնելու ու պահպանելու ընտանիք մը։ Այն իրողութիւնը թէ իր չափահատութիւնը միայն քսանեհինգին կը լրանայ, և թէ երբ այդ տարիքն համնի, իր ֆիզիքական ու մասյին կարողութեանց կատարեալ հասանութեան կը համնի, կրնանք նկատել իրը բնութեան մէկ ազգարարութիւնը թէ իր տնաշինուրինել պիտի չէ յանեւսինգին ուշ սկսի։ Այս կը

նշանակէ ուրեմն թէ երիտասարդները, եթէ կարելի ըլլայ, առ առւաւելն քսանեհինքին պարտին ամուսնանալ:

Բայց արդի ժամանակներու ընկերային պայմանները այնպէս են որ, երիտասարդներուն մեծամասնութիւնը, մասնաւորապէս անոնք որ կը պատրաստուին հմտութիւն պահանջող արհեստներէն մէկուն (աստուածաբանութիւն, բժշկութիւն, օրէնսդիմութիւն, մանկավարժութիւն ևալին), իրենց ուսումները հազիւ աւարտած կ'ըլլան այդ տարիքին, և անոնցմէ շատերը կ'զգան թէ ընտանեկան պատավախանատութեան ներքեւ մանելէ առաջ գոնէ սկզբնաւորութիւն մը ընեն իրենց արհեստին մէջ: Այս կը նշանակէ թէ անոնց մեծագոյն մասը հազիւ երեսուն տարեկանին կ'ամուսնանայ:

Երբ ի նկատ աւնենք այն արեւտրական, սեղանաւորական և ճարտարաբուեսական արհեստները, որոնք բաւականաչափ պատրաստութիւն կը պահանջնեն արհեստագիտական հաստատութիւններու մէջ, կամ երկարատեւ աշկերտութիւն (մեքենագիտասութիւն, գեղագործութիւն, քիմիան և այլն), կը տեսնենք թէ երիտասարդը հազիւ կարող է ընտանիք մը կազմել, ինչպէս շատ մը այսպիսի երիտասարդներ, որոնք կ'զգան թէ պէտք է կուզմեն իրենց մինչև քուանետթթը, երեսուն տարեկանին առած ամսականներով: Այս նկատութիւնը կը յարմարի մասնաւորաբար քօղէնի և համարանի երիտասարդներուն, որոնք գրեթէ առանց բացառութեան, վերոյիշեալ արհեստներէն մէկուն կը պատրաստուին:

Երդ, գոլէճական կեանքի պայմանները, զոնագան գաշտային խաղերովը, ինչպէս և ընկերային պայմաններովը, կը ձգտին պատրաստելու զօրեղ, առնական երիտասարդներու խումբեր: Այն հարցը որ մեզի կը ներ-

կայանայ հիմա, սա է թէ ինչպէս այս երիտասարդները կընան վերոյիշեալ անդնական պայմաններուն ներքեւ առղջապահիկ կեանքը մը ապրիլ:

Եթէ մարդ կարող է իր տամանեօթը տարեկանին վերաբանագրել իր նմանը, բայց հազիւ երեսունին կարող է ամուսնանալ, ուրեմն պէտք է լուծէ սա ինդիբը թէ սեռային հարցերու մասին իր վերաբերումը ի՞նչ պէտք է քլայ այդ ժամանակամիջոցին: Որքան կանուխ լուծէ երիտասարդը այս ինդիբը, այնքան աւելի լաւ է իրեն համար: Դժբաղդաբար, երիտասարդներու մեծ մաս մը չեն ըմբռներ թէ այս տեսակ ունի ինդիբը մը ունին լուծելիք, մինչեւ այն ժամանակ, երբ պարագաները գրեթէ գիտուածու, իր մէջը սրոց մտային վերաբերում մը հաստատած են, կամ թիրեւս: կեանքի ունակութիւններ, որոնք առաջարար կամ իմաստուն չեն:

Մինչեւ հիմտ ըսուածներէն յայտնի եղած ըլլալու է թէ արբունքի շրջանի առաջին ամիսներէն, մինչեւ չափահաս տարիքը, կամ նոյն իսկ երեմնի ծերութեան մինչեւ որոշ մէկ ասամիմանը, ամէն, սպարական՝ արու սեղանի փափաքներ կ'ունենայ: Բացաարեցինք թէ այս մասնաւոր զգացողութիւնները սերս կապակցութիւն ունին սեռային գործարաններու վիճակին հետ, սակայն ենանքին, պատճառը ինչ կ'ուգէ թող ըլլայ, սա հարցուայնպէս, պատճառը ինչ կ'ուգէ թող ըլլայ: Սա հարցուայնպէս մը միշտ կը ներկայանայ թէ ի՞նչ լնելու է:

Երբ մարդ սեռային փափաքներ ունենայ, առ կը նշանակի: թէ այդ փափաքները պէտք է անսպատճառ գործառում գտնեն: Ոմանք կը փասանի թէ ճիշդ ինչպէս որ բաղուկին մասը եթէ չգործածուի կը ակարանայ ու կը չորսայ, ուրեմն սեռային փափաքներն ալ, եթէ պատճենական գործիւն չունենան գործերու, կը չորսան և կը հիւծին: Թէկ այս պատճառաբանութիւնն եղանակը բանաւոր կ'եթէկ այս պատճառաբանութիւնն եղանակը բանաւոր կ'եթէկ

րենի և եղբակացութիւնն. ալ ընդունելի, և սակայն քնախօսներու և ընկերաբաններու ծանօթ իրողութիւնն մըն է թէ այս պատճառաբանութիւնը սիսալ է, սիսալ-մունքը ենթադրութիւններուն մէջ է. ենթադրուեցաւ թէ սեռային գեղձերու գործունէութիւը կրնայ նմանցուիլ մկաններու գործունէութեան:

Պէտք չէ մոռնանք սա իրողութիւնը թէ արուին սեռային գեղձերը անընդհատօրէն կը գործեն, և այս անընդհատ զործունէութիւնը կը զարգացնէ և զանոնք կատարեալ կը պահէ արրունքի շրջաննէն վերջ: Իրենց գործունէութիւնը կը բարդանայ մեծապէս ներքին հոսումէ, որուն պաշտօնն է արուին մէջ անտականութեան բարձրագոյն աստիճանը յառաջ բերել: Պէտք չէ մոռնանք նաև սա իրութիւնը թէ ամէն սերնդագործական գործողութեան, արուն այս կենսական հեղուէին մաս մը կը զոհէ: Այս կենսական հեղուէին ամենաանցին կրուստը չարդարանար ոչ գիճութեան պարագային, ոչ խիստ յաճախ զուգաւորումի պարագային, ոչ ալ կարելի է խորհիլ թէ այս գործողութիւնները կ'ընեն գեղձերուն այն օգուտը, դոր մարզանքը կ'ընէ մկանային հիւսուածքներուն:

Այս ըսուածներուն համեմատ ամէն բնականոն մարդ ընդունելու է թէ յաճախսակի եղած զիճութիւնը, ոչ ալ չափազանց զուգաւորումը, ըլլայ ամուսնութեան մէջ թէ դուրսը, յանձնարարելի բաներ չեն իրը մէթոսներ սեռային գործարանները զարգացնելու:

Ետք սակայն սա հարցումը կ'ընեն: — «Սեռային փափաքները գոհացնելու համար եղած ու և է չափազանցութիւն, կամ ու և է արուեստական միջոց այպանելի է»: Այս փափաքները բնութիւնն է որ կուտայ մեղի..

նախամարդը երբ որ անոր պէտքը զգար, պիտի ջանաբ գանել ընկեր մը, պիտի կուռէր անոր տիրանալու համար, երբ որ բաւականաչափ մկանային ոյժ դիզած ըլլար, և անդամ մը որ տիրանար իր ընկերունիին, զայն պիտի տանէր իր ծառերուն վրայ կամ քարայրներու մէջ: Իր նախնական բնակարանին մէջ իր սեռային փափաքներուն պիտի մզուէր, պիտի յղացնէր իր կինը և պիտի պաշտպանէր զայն ընդդէմ բոլոր վասնգներու:

Մեր արդի ընկերային պայմաններուն ներքեւ երիտասարդը կ'զգայ ձիշդ այն փափաքները զորս կ'զգար նախամարդը, բայց կարող չըլլար ընկերունի մը ընարել և ընտանիք մը կազմել, այդ փափաքները սկսելէն տասնեակ մը տարիներ վերջն իսկ: Ի՞նչ է այս բանին լուծումը:

Ոկներեւ է որ լուծումը պէտք է ըլլայ սա երեք միջոցներէն մէկը — կամ երիտասարդը, գոհացում տաւու համար իր սեռային փափաքներուն, պէտք է կիներուն հետապօրէն յարաբերութիւն հաստատէ, կամ պէտք է արուեստական միջոց մը ընարէ, ինչպէս է գիճութիւնը, կամ վերջապէս, պէտք է ասլորի ժուժկալ կեանք մը: Ժուժկալութիւն ըսկով կը հասկնանք սա թէ ան պէտք է ընարէ առաջին երկու միջոցներէն ոչ մէկը, այդ սեռային գործարաններուն հոգը պէտք է ձգէ բնութեան:

Հիմա, այդ երեք միջոցներն ալ քննենք իրենց կարգին:

---

# 1. ԱՊՈՐԵՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒԽՆ ԿԻՆԵՐՈՒ ՀԵԾ

Կիներու հետ ապօրէն յարաբերութիւն ըսկով կը հասկնանք սեռային յարաբերութիւն, որ ամուսնութեան դուրս է։ Այս բառը կը յարմարի, երբ յարաբերութիւնը ու եւ է մարդու մը և պոռնիկի մը, չամուսնացած մարդու մը և ամուսնացած կնոջ մը, չամուսնացած մարդու մը և չամուսնացած կնոջ մը, կամ ամուսնացած մարդու մը և ամուսնացած ուրիշ կնոջ մը միջեւ է։ Ապօրէն յարաբերութիւն ոճը կը գործածուի այն ամէն պարագաներուն, որոնք օրինաւոր չեն։

Երբ երիտասարդին սեռային հարցը պիտի լուծենք, մենք նկատի պիտի առնենք մասնաւորապէս անոր պաշտօնական բողերու և գաղտնի պոռնիկներու հետ յարաբերութիւնը, կամ կիներու հետ, որոնք կը յօժարին սեռային յարաբերութիւն ունենալ, իրենց իսկ համարքին կամ դրամի համար։

Սեռային զգայնամզութեան այս ձիւզին մէջ, կ'ենթագրուի թէ կինը մ'կէ աւելի մարդոց հետ յարաբերութիւն կը հաստատէ։ Նպաստակուոր կերպով մեր վիճաբանութենէն դուրս կը ձգենք այն պարագաները, երբ ոմանք կոյս աղջիկներ կը մոլորեցնեն ու կը համոզնի սեռային կրքի գոհացման համար, քանի որ այսպիսի մոլորեցում մը ահաւոր մեղք մ'է թէ զոհին և թէ ընկերութեան հանդէպ, որուն համար մարդ օրէնքի առջեւ պատասխանատու է։ Հոս մենք նկատի չունինք մարդոց ոժիրները, այլ անոնց մոլութիւնները։

Երիտասարդը բնականաբար հետեւեալ հարցումը կը հարցնէ. — «Ինչո՞ւ ընկերութիւնը մոլութիւն մը կը նկա-

տէ յարաբերութիւնը կնոջ մը հետ, որ իր իսկ հաւանութիւնը տուած է գործին, կամ նոյնիսկ կը ինդրէ յարաբերութիւնը, և ինքընքը այս կեանքին տուած է, իր միակ որհնաստ (բող), կամ իր երկրորդական զրապում (մէջրէս), որպէսզի կարող ըլլայ իր չբաւող օրապահիկը շատանել ու աւելի հնչուորէն ապրիլ»։

Այս հարցումին պատասխանը հեռուն պէտք չէ գնաւոհել։ Այսպիսի զբաղումներ ունեցող կիներ, ընդհանուր առմամբ, ինքինքնին անկարող ըրած են մայրութեան։ Անոնք ընկերութենէն վտարեաներ են, որոնք ամենավեսասակար ազգեցութիւն մը կ'ունենան ամէն անոնց վրայ, որոնց հետ յարաբերութեան կը մտնեն. բացասարի, անոնք ազրիւրն են այն բոլոր վեներական ախտերուն որոնք կը կործանեն առողջութիւնը ամէն անոնց, որոնք կը վարակուին։ Եթէ մարդոց անզուսպ կիրքերը չըլլային, ասանկ կիներ չպիտի զանուէին։ Այսպէս որ, եթէ մենք անհատապէս պատասխանատու չենք ու եւ կնոջ մը անկումին համար, պէտք է խոստովանինք թէ, մարդիկ իրր գասակարգ պատասխանատու են բոլութեան ու մէջուէմներու այս դրութեան համար։ Կիներու անհուն մնեամանութիւն մը, եթէ իրենց փափաքին ձգուէին, պիտի ուղէին զուգաւորում ունենալ միայն ամուսնութեան մէջ, և մի միայն սերնդագործման համար։

Բայց չատ կիներ, ամուսնութեան խոստումով մը, կամ երեսն նոյն իսկ կեղծ ամուսնութեամբ մը, կերպով մը կը հիբնոսանան, կամ այնպիսի մտային վիճակի մը մէջ կ'իման, որ իրենց սիրած կամ յարգած անձին ներքեւ կը մտնեն։ Եթէ ան վինքը խարէ կամ ուժին ներքեւ կը մտնեն։ Եթէ ան վինքը իսրէ կամ մատնէ, մինչեւ այն ատեն, երբ ինկը զո՞յ ըլլայ, մատնէ, մինչեւ այն ատեն, սովորաբար կը թողու որ ամօթով ծնի իր այն ատեն, սովորաբար

զաւակը, մինչ ինք կը փախչի ուրիշ գործեր տեսնելու։ Աւրեմն չենք կրնար զարմանալ երբ աղջիկը — լքուած, ամօթանար, կործանուած նոյն իսկ անկէ՝ որուն վրայ բացարձակ վստահութիւն ունէր, վտարուած ընկերութենէն, թերեւ նոյն իսկ իր հայրենի առւնէն վոնտուած։ — տեղի կուտայ իր մաքառումին մէջ ու կ'ըսէ. — «Է, ինչ ընկեմ»։

Սոսանկ խեղճ աղջիկներու անհուն մեծաւմասնութիւնն մը կ'երթան անպատիւ տուներ և հնու ինքինքնին կուտան պոռնիկութեան։ Այս կիներէն ո և է մէկը, եթէ ամուսնանար անոր հետ որ զինքը այս վիճակին բերաւ, անտարակոյս պիտի ըլլար սիրասուն կին մը ու տիպար մայր մը։ Այսպէս որ ընկերութիւնը, որ կը վտարէ իր ծոցէն այս կիները, կը սկսի ճանչնալ թէ մարդն է իրաշկան մեղապարտը այսպիսի պարագաներու մէջ։

Հոս կրնայ աւելցուիլ թէ երեմն աղջիկներ կրնան մոլորիլ խառնուածքի պակասութիւններէ մզուելով — կրնան վատասսերեալներ գտնուիլ, բայց այն կիները ուրոնք յօժարօրէն ու գիտակցօրէն պիտի զոհէին իրենց առաքինութիւնը, անհունօրէն աւելի փոքր թիւ մը կը ներկայացնեն բաղդատմամբ այն երիտասարդներուն՝ ուրոնք յօժարօրէն իրենց առաքինութիւնը կը կորսնցնեն։ Ասիկա կարլի է վերագրել մասամբ կրթութեան։ Մայրերը սովորաբար, իրենց աղջիկ զաւակներուն մասնաւոր հոգ կը տանին անոնց յարաբերութիւնները տղայոց և մարդոց հետ սորվեցնելու մէջ։ Այս բանը մասամբ վերագրելի է նաև կողջ մաքին բնազդային ու ներքին անքութեան։

Բնութիւնը կանանց հետ ապօրէն յարաբերութեանց փոխարէն հաստատած է վեներական ախտերը։ Եթէ երկու կողմիցն ալ հաւատարիմ գտնուին ամուսնական

խոստումներու, խիստ հաղուադէպ է որ ամուսնութեան մէջ վեներական հիւանդութիւններ ծագին, և ատոնք ալ յուռաջ կուգան պատահական ներածումներէ, օրինակի համար ո և է մանրային գործիքի, պէտքարանի, անձեռոցի կամ ջուրի գաւաթի հետ շփում ունենալէ։ Եւ սակայն այնքան հազուադէպ է այս վերջին պարագան որ, կրնանք ըսել թէ, մաքուր ամուսնութեան մէջ զուգաւորումը պարզապէս հաճոյք մը կ'ըլլայ երկու կողմին համար ալ, մինչ ամուսնութիւննէ գուրս զուգաւորումը — ապօրէն յարաբերութիւնը — կ'ընդունի իր բնական պատիմը։

Ի՞նչ ձեւի տակ կը ներկայանայ այն պատիմը զոր բնութիւնը սահմանած է ապօրէն յարաբերութեան այս մոլութեան դէմ։ Բացի զանազան հոգեկան պատիմներէ որոնց գլխաւորներն են խոհի խայթ, անմաքուր մտապատիկներ, կան նաև ֆիզիքական պատիմներ, վեներական ախտերու ձեւին տակ։ Անպատիւ կիներու մէջ այս վեներական ախտերը, այնքան յաճախադէպ են որ, ըլլան անոնք բողեր կամ մէթրէմներ, այս ձիւղին մասնագէտները կ'ըսեն թէ, «Բոլոր անսառակ կիները պարբերաբար, իսկ, անոնցմէ ոմանք միշտ հիւանդ են»։

Այս սեռային ախտերը փոխանցիկ են — այսինքն մէկէ մը ուրիշի մը կ'անցնին հոլումով։ Ամէնքն ալ մանրէական ախտեր են. անոնցմէ մէկը տեղական է, մին կարող է վարակումը յարակից գործարաններուն անցնել և ուրիշ մը՝ ամբողջ կաղմին։

Ա. Զարակեղ (\*). — Ասիկա վեներական ախտերուն թեթեկեթեւագոյնն է։ Զուտ մասնակի հանգամանք ունեցող փոխանցիկ ախտ մըն է, որ սովորաբար կը ստացուի սեփական գործարաններուն

ռային զործողութեան ատեն, և վարակումը տեղի կ'ունենայ նուրբ թաղանթին վրայ ո և է բայց ածքէ մը ։  
Զարակեղը (Չիպանը) կրնայ ըլլայ մէկ հաս, թէև գրեթէ միշտ բազմաթիւ կ'ըլլայ. վարակումէն մէկն հինգ օր վերջը կը յայտնուի, առնական անդամին վրայ տեղ մը, բայց ընդհանրապէս բրդաձեւին ներքեր, իբր կարմիր բիծ մը :

Այս բիծը չուտով կ'ստանայ պալորի մը երեւոյթը ու կը լցուի չարաւով ու չինուկով, և քանի մը օրէն երկու գանձկաննոցի մը մեծութիւնը կ'ստանայ: Երբ կեղին վրայի մասը վերցնենք. զրոյմուածի երեւոյթ մը ունի, ու յատակն ալ չարաւով ծածկուած է: Բորբոքումի գոտով մը շրջապատուած ու ցաւստ է:

Եթէ ուեէ բարդութիւն մէջաեղ չեղէ, ախտը երկու քէն մինչև հինգ չարաթ կը տեսէ: Ամենէն սովորական բարդութիւնը աճուկին գեղձերուն ուսին ու թարախուկը է:

Երբեմն ծանր կնճռոտութիւններ կրնան ծագիլ որոնք կ'ստիպեն ենթական չարաթներով անկողին պառկիլ:

Բ. Զերմալիզուրիւն (gonorrhœa). — Ասիկա չարակեղէն անբաղդատեկորէն աւելի լուրջ բան մըն: Այս ախտը շատ սովորական բան մ'է ցոփակեացներու մ'ջ, և մասնագէաններու կարծիքին համաժայն, մարդոց վաթսունէն եօթանասունէինգ առ հարիւրը չերմամիզութիւն ունեցած են իրենց երևուն տարեկանէն սուած:

Ասիկա փոխանցիկ ախտ մըն է, որ սովորալար զուգաւորման ատեն կ'ստացուի, թէև մարդ կրնայ անմեզորէն վարակուիլ նաև պէտքարաններէ, լոգարաններէ և այլն:

Վարակուելու համար անհրաժեշտ չէ որ բարակ

մաշկին վրայ սկրդուկ մը ըլլայ: Ախտը ինքզինքը կը յայսնէ անհատին ենթարկուելէն երեքէն եօթը օր վերջ, միզուկին ծայրը ուռեկով, խտստալու. և քերուելու նման զգացողութիւններով, և միզելու ժամանակ կոկծացող կամ այլող զգայնութիւններով: Այս մասնաւոր զգացողութիւնները ուշագրութիւնը կը կերպոնացնեն այդ գործարաններուն վրայ, և աւելի յաճախ միզելու պատճառ կ'ըլլան:

Այս նշանները մինչև մէկ չարաթ կը չափնան, երբ ախտը իր գերագոյն սասակութեանը կը հասնի, օր փոփոխելի ժամանակամիջոց մը կը առէ, և միզուկէն արտահոսուած հեղուկն ալ խոսցեալ, թանձր կ'ըլլայ, ու կանանչ-գեղին գոյն մը կ'առնէ:

Լաւ ինամւած գէպեկրէն մեծագոյն մասը երեքէն վեց չարաթ ժամանակամիջոցի մը մէջ երեւութապէս բռնաւած կը նկատուի. գժրազգաբար սակայն, յաճախ ախտը քրնիկ ըլլալու հակամէտ է: Արտահոսումը, նօսր և աւելի ջրային կ'ըլլայ և անորոշ ժամանակ մը կը առէ: Այս վիճակը «քրոնիկ չերմամէզութիւն» և «Կաթկթուք» անունով ծանօթ է:

Գ. Փրանելիախ, որ կը կոչուի նաև «Սիֆիլիս», կազմուածքի ախտ մէ ու արիւնային ախտաւորումի գամին կը պատկանի:

Վեներական ախտերուն կարեւորագոյնն է ու ամենէն անարկուն: Ոչ մէկ ախտ այնքան ծաւալ գտած է ու այնքան ազդած է մարդկութեան վրայ, որքան այս ախտը:

Դարերէ ի վեր ան ձանցուած ու յիշուած է ծառնոցի պատմէջներէ ու չինական գրութիւններու մէջ, ասկէ երկու հազար տարի առաջ:

Փրանկախտը փոխանցիկ է ու մորթէն ներմուծմամբ

Կ'անցնի : Վարակիչ նիւթը , կամ մորթին կամ բարակ մաշկին սկրդուած մէկ տեղէն կը մտնէ , և կը կոչուի «Փոխանցուած» կամ «Ստացուած» Արֆիլիս : Երբ մօրմէն կը փոխանցուի զաւկին , կը կոչուի «Ժառանգական» փրանկախտ :

Ախտը ինքվինքը կը յայտնէ ենթարկումէն տասէն մինչեւ երեսուն օր վերջը , «Նախնական վէրք»ի մը ձեւով , տեղական պալարի մը կերպարանքով ներարկման տեղին շուրջը : Մաշած կամ չորցած թեփի կամ կարծրացած բշտիկի երեւոյթը կ'առնէ , մեծութիւնն ալ գընդասեղի մը գլուխէն մինչեւ մէծիտի մը մեծութեամբ կրնայ ըլլալ : Պալարին յատակը կարծր է , վէրքը ձուաձնեւ է ու թերեւս քիչ մը անկանոն , հում երես մը ունի ու յատակն ալ կարմիր է ու առանց թարախի :

Բշտիկին երեւումէն անմիջապէս վերջը , հետը անմիջական կապակցութիւն ունեցող գեղձերը կ'ընդարձակին , կը կարծրանան , քիչ անդամ ցաւով , բայց և այսպէս չարակեղին ընդարձակուած գեղձերուն պէս թարախուելու հակամէտ չեն :

Թանի մը շարթուան մէջ պալարը կ'անհետի և ենթական ախտի արտաքին ո և է նշան չունենար : Պալարին աներեւութացումէն գրեթէ վեց չաբաթ վերջը կ'երեւին երկրորդական նշանները , որոնց ազդանիշերն են , զիսուցաւ , կունակին և անդամներուն մէջ ցաւ , սիրտ խառնուուք , անքնութիւն , ջղագրգուութիւն ու տաքութիւն , որմէ վերջ դէմքին և մարմնոյն փրայ կ'զգացուի եռք մը , հերաթափութիւն , կոկորդի և բերնի ցաւ : Այս նշաններն ալ կ'արեւութանան , և առանց ո և է արտաքին նշանի շրջան մը կ'սկսի : Երկարագոյն կամ նուազագոյն ժամանակամիջոցէ մը վերջը երրորդական նշանները կ'երեւին , որոնք բաղմազան ու այլատեսակ կ'ըլլան :

Ախտը յառաջ կը բերէ կազմուածալին խանգարումներ , որոնք փոփոխական ժամանակամիջոցներով երեւան կուգան , և քրոնիկ հանդամանք մը կ'առնեն այս կերպով :

Այս ախտը մարմնոյն մէջ կը մնայ տարիներով և կ'ազդէ ամնէն ինսսական գործարաններուն , ուղեղին և ողնածուծին վրայ մասնաւորագէս :

Երբ ո և է մէկը վարակուի այս ախտէն , պէտք է անմիջապէս անուանի բժիշկի մը դիմէ : Այս ախտին բուժման գործողութիւնը երկար ժամանակ կը տեէ , սովորաբար մինչեւ երեք տարի , և պէտք է խստութեամբ ու խղճմութեամբ կիրարկուի : Մէկը որ ատենօք վարակուած է ու ամուսնանալ կ'ուղէ , պէտք է բժիշկի մը հաւանութիւնը առնէ :

Վեներական ախտերաւն ահեղ մանրամասնութիւնները տաէ վերջ , աւելորդ է ըսել թէ այն երիտասարդը որ զիտակցօրէն կը փորձէ ապօրէն սեռային յարաբերութիւն , իր կեանքին հետ խաղացած կ'ըլլայ : Եթէ վեներական ախտով վարակուիլ նշանակէր միայն վարակեալ անձին մահը , ատիկա այնքան ազիտարեր չպիտի ընկերութեան համար , որքան արդի վիճակին մէջ : Երբ երիտասարդը պատահօրէն փրանկախտ կ'առնէ , քան մը՝ որ քսան արդի առաջ «կատակ» մը պիտի նկատուէր , խաթարուած առողջութեան մը հիմը կը զնէ , և ախտը անմեղ , անարատ կնոջ մը փոխանցելու ռճիրը պիտի գործէ :

Երբ կին մը վարակուի այս ախտէն , մանաւանդ ամուսնէն , հաւանաբար արտահոսութիւնը պիտի մեկնէ իբր սպիտակահոսութիւն մը (leucorrhea) , և ամուսնոյն կամ բժիշկին բան մը չըսեր , և պարզապէս տնական կը կիրարկէ , հականեխական և պնդացնող ըըրգեղեր կը կիրարկէ , հականեխական և պնդացնող ըըր-

